№ 171 ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 7

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 7 № 171

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
ՏԷԼԷՖՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են ի-բրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(37-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

Օգոստոսի 1-ից մինչև տարվայ վերջը 5 ռուբլի։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Օգոստոսի 1-ից
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆ
Սերգիեվսկայա փող. (Սօլօլակ), տուն Ներսիսեան դպրոցի, № 5.

Ժողովրդական Տուն
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
Ժողովրդական ներկայացումների կազմակերպ.
№ 14 Հայկական սեկցիա № 14
Շաբաթ, 8 օգոստոսի
Հայոց դրամ. ընկ. թատերասէրների խումբը Մասնակցութեամբ տ. Գուլազեանի կը ներկայացնէ ժամանակից նոր պիէս
„ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԶՈՀ“
Դրամա 3 գործ., Արաքսեանի «Նամուս» պիէսայից փոխադրութիւն Բաշիաշվիլու, թարգմ. Սափրիչի։
Սկիզբն է երեկոյեան 8½ ժ.։
Տեղերի գնները 50 կ. մինչև 5 կ.։
Հերթական կարգադրիչ՝ Գ. Երիցեան
(ու. շ.) (առ.) 754. 2—1

Շուշու Թեմական Դպրանոցի
համար հարկաւոր են.
1. Բարձր դասարանների ռուսաց լեզուի, ռ. պատմութեան և ռ. աշխարհագրութեան մի ուսուցիչ՝ 23 դասով, բարձրագոյն կրթութեամբ (ֆիլոլոգ) կամ ինստիտուտաւարտ։
2. Նոյն դասարանների մատեմատիկայի համար մի այլ մասնագէտ ուսուցիչ 19 դասով (թերևս այս դասերի թիւը յետոյ աւելանայ)։
Համալսարանականների համար դասագինը 50 ռ. է, իսկ ինստիտուտաւարտներինը՝ 40 ռ.։
Առաւելութիւն կը տրվի փորձ և մանկավարժական անցեալ ունեցողներին։
Անհրաժեշտ է խնդրագրերի հետ ներկայացնել ուսման վկայականները կամ նրանց վաւերացրած պատճէնները։
Ցանկացողները թող բարեհաճեն դիմել դպրոցի տեսչին մինչև օգոստոսի 20-ը հետևեալ հասցէով՝ Джелалъ-Оглы (Тифл. губ.) Аветику Теръ-Погосяну.
(կ.ե.ու.) (առ.) 725. 5—3

ԹԻՖԼԻՍԻ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ել մեկ հիւանդների համար ամեն օր, Վոկզալնայա 8, տ. Էնֆիաճեանցի։
Տելեֆոն 695
Ս. Դ. ՖԷՅՕՐՈՎ ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի օրերից, 8½-ից մինչև 9½, ներքին հիւանդ.։
Գ. Դ. ԳԱՄԲԱՇԻԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 11—12 ժամը, ներքին և ներխանարի։
Բ. Ա. ՊՕՊՕՎԵԱՆ երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ 12—1 ժամը, կ.կորպ քթի և ականջի։
Գ. Մ. ՄԱԿԱՐԵԱՆ երեքշ. և ուրբաթ օրերը 12—1 ժ., ներքին։
Ա. Ն. ԴԻԱՍԱՄԻԶԷ ամեն օր, 11½-ից մինչև 12½ ժ., սիֆիլիս և կաշու հիւանդութիւններ։
Ն. Մ. ՄԵԼԻՔՕՎ ամեն օր, խորուրդական և կանանց հ. 1—2 ժամը։
Ի. Դ. ԳՕՄԱՐԹԷԼԻ ամեն օր, ներքին և երեխաների, 2—3 ժամը։
Բ. Ս. ՄՈՒՍԽԷԼՕՎ ամեն օր, բացի կիրակի օրերից, 2—2½ ժ., աչքի հիւանդ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Գ. ՄԻՐԶՈՅԵԱՆ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Ն. Գ. ԶԻԶԻՆԱԶԷ ամեն օր, բացի կիրակի օրերից, 6—7 ժ., ներքին և երեխաների։
Հիւանդանոցում կատարվում են միկրոսկոպիական, բակտէրիոլոգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս ծաղիկի պատուաստում և ծծմայրերի քննութիւն։ Վճար խորհրդի համար 50 կոպէկ։
(օ. մ.) ա. 38. 100—72

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՇՎԷԴԻԱՅՈՒՄ

Կապիտալի և աշխատանքի մի հսկայական կռիւ է սկսվել Եւրոպայի ամենակրթված և առաջադիմական հիւսիսային երկիրներից մէկում, Շվէդիայում։

Մի կողմից ձեռնարկողները, կապիտալիստները լոկաուտ են յայտարարել, միւս կողմից մօտ 400,000 բանւորներ գործադուլ են յայտարարել։

Ով յաղթող կը հանդիսանայ այդ վիթխարի պայքարի մէջ, ցոյց կը տայ ապագան։

Բայց աչքի է ընկնում այդ վիթխարի պայքարի մի բնորոշ յատկութիւնը՝ նրա խաղաղ ընթացքը։ Երկու իրար հակառակորդ դասակարգեր կռիւ են մղում իրար դէմ ոչ թէ կոպիտ ոյժերով, բռնութեան և այլ անկուլտուրական միջոցներով, այլ խաղաղ եղանակով։ Ուստի կռւի մէջ յաղթող պէտք է հանդիսանայ ոչ թէ կոպիտ ոյժը, այլ կամքը, տոկունութիւնը։

Եւ ուրիշ բան էլ չէր կարելի սպասել Շվէդիայի պէս մի երկրի ժողովրդից, որ միշտ պրօգրէսի գլուխն է եղել կանգնած և յայտնի է իր վերին աստիճանի աշխատասիրութեամբ։

Աչքի է ընկնում և մի այլ առանձնայատկութիւն։ Շվէդական կառավարութիւնը այդ պայքարի մէջ վերին աստիճանի կօրրեկտ է պահում իրան. նա չէ միջամտում ոչ մի կողմի օգտին. նա իրան չէզոք է պահպանում և աշխատում է հաշտեցնել պայքարող կողմերը փոխադարձ զիջումների համաձայնութեամբ։ Նա միայն արթուն կերպով հսկում է, որ կողմերից ոչ մինը չը վրդովվի, չը խանգարէ հասարակական անդորրութիւնը։ Եւ այդ պատճառով էլ նա չէ փակում պրօֆեսիոնալ ընկերակցութիւնները, արգելք չէ լինում խաղաղ միտինգներին, ժողովներին։

Այդպիսի վարմունք կառավարութեան կողմից բարոյական մեծ ազդեցութիւն է գործում, ի հարկէ, ժողովրդի վրա, որ պարզ տեսնում է, թէ իր կառավարութիւնը պաշտպան է ընդհանուր ժողովրդական և ոչ դասակարգային շահերի, որ նրա համար կարևոր է համայն շվէդական ժողովրդի ընդհանուր բարօրութիւնը և ոչ այս կամ այն դասակարգի։

Հ. Առաքելեան

ՊԱՐՕԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Լօնդոն, 5 օգոստոսի

Ռելտերի գործակալութեանը հաղորդում են Թէհրանից, որ շահի մեկնելը դարձեալ յետաձգվեց, այս անգամ այն դժուարութիւնների պատճառով, որոնք շաղկապված են շահի բազմաթիւ պարտքերը կանոնաւորելու հետ։ Ինչպէս յայտնի է, շահի Ատրպատականի կալուածքները գրաւ են դրված ռուսաց բանկում դեռ շահի գահաժառանգ եղած ժամանակ։ Նացիոնալիստները, վախենալով կորցնել հսկողութիւնը այդ կալուածքների վրա, առաջարկեցին շահին կենսաթոշակներն աւելացնել այն պայմանով, որ նա այդ կալուածքների հսկողութիւնը կը յանձնէ պարսից կառավարութեանը, որը և իր վրա կառնէ նրանց լիկվիդացիան։ Շահը ժամանակ պահանջեց մտածելու։ Կարծում են, որ նա չի ընդունի արված առաջարկութիւնը։

Թէհրանում պատուիրակների ընտրութիւնները վերջացան։

Կազմվեց դիրեկտորիա քսան անդամից բաղկացած։ Նրանց թւում են Սիփէհդարը և սարդար Ասադը։ Դիրեկտորիային տրված է մեծ իշխանութիւն. ի միջի այլոց նա իրաւունք ունի կոնտրոլի ենթարկել փինանսների գործողութիւնները։ (Հ. Գ.)

—

Լօնդոն, 5 օգոստոսի

«Թայմսին» հաղորդում են Թէհրանից, որ նացիոնալիստները ցանկանում են շահի կենսաթոշակի համաձայնութեան պայմաններում մտցնել մի կէտ ևս, որի համաձայն կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել, եթէ ապացուցվի, որ շահը երբեւիցէ ինտրիգներով կը զբաղվի Պարսկաստանի դէմ։ Ռուսաց և անգլիական միսսիաները, որոնք մասնակցում են կառավարութեան և նախկին շահի միջև կատարվող բանակցութիւններին, հեռագրով հրահանգներ խնդրեցին իւրաքանչիւրն իր կառավարութիւնից։ (Հ. Գ.)

—

Թէհրան, 5 օգոստոսի

Գահաժառանգ է նշանակվելու շահի տասնամեայ եղբայր Մահմէդ-Հասան-Միրզան։ («Հ. Գ.»)

—

Թէհրանից հաղորդում են, որ Մահմէդ-Ալի շահը ունի պարտք մի միլիոն ու կէս թուման։ Այժմ անգլիական և ռուսական դեսպանատները առաջարկում են պարսից կառավարութեան՝ այդ պարտքի փոխարէն վերցնել գանձնկէց շահի անշարժ կալուածները, որոնք տարեկան 300,000 ռ. եկամուտ են բերում։

—

Ռուսաց նախկին դեսպան Հարտվիգի տեղ նոր դեսպան նշանակված պ. Պոկլէվսկի-Կոզէլը Պետերբուրգից Թէհրան կուղեւորվի Մահմէդ-Ալի շահի մեկնումից յետոյ։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 5 օգոստոսի

Մեծ պալատում ի պատիւ աւստրօ-ունգարական կայսրի, նրա ծննդեան օրվայ առիթով, տեղի ունեցաւ ճաշ, որին ներկայ էին Նոցին Մեծութիւնները, Մեծ Իշխանները, Պետերբուրգի անդամները, աւստրօ-ունգարական դեսպանատան պաշտօնեաները, Պալատի մինիստրը, արտաքին գործերի մինիստրութեան ժամանակաւոր պաշտօնակատարը և այլք։ Ճաշի ժամանակ Թագաւոր Կայսրը բաժակ առաջարկեց աւստրօ-ունգարական կայսրի առողջութեան կենացը, որ ծածկվեց աւստրիական ազգային օրհներգի հնչիւններով։ (Հ. Գ.)

—

Գանձակ, 5 օգոստոսի

Շուշու քաղաքագլուխ Քալանթարեանի կեանքի դէմ մահափորձ կատարող յանցաւորների մի մասը ձերբակալվեց։ Պարզված է, որ յանցագործութիւնը կազմակերպել են «Դաշնակցութիւն» կուսակցութեան անդամները։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 5 օգոստոսի

Նեղուցների առիթով բանակցութիւնների լուրերի հերքումը թիւրքաց լրագիրները մեկնում են Ռուսաստանի համար ամենաբարեկամական արտայայտութիւններով։

Գեներալիսիմուս Մահմուդ-Շեվկէթ փաշան Վիլհելմ կայսրից հրաւիրված է աշնանը գերմանական զինուորական վարժութիւններին։ (Հ. Գ.)

—

Սոսկհոլմ, 5 օգոստոսի

Գործադուլի ընթացքի մէջ փոփոխութիւն չը կայ։ Տուրիստների թիւը զգալի կերպով կրճատվել է. հիւրանոցները լի են։ (Հ. Գ.)

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ արդարադատութեան մինիստր Շէգլօվիտովը նշանակվում է դեսպան Բերլինում։

ԿՐԵՏԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Կանէա, 5 օգոստոսի

Հովանաւորող պետութիւնների հիւպատոսները կրէտական կառավարութիւնից պահանջեցին իջեցնել յունական դրօշակը, նախազգուշացնելով որ մերժման դէպքում պահանջը կանվի արդէն Կանէա եկած պատերազմական նաւերի դեսանտներով. իսկ ամեն մի դիմադրութիւն կամ որևէ թշնամական գործողութիւն կրէտացիների կողմից կարող է ծանրագին հետևանքներ ունենալ։

Հիւպատոսների դիմումը կարդացվեց պատգամաւորների պալատում և ամբողջ կղզում հրատարակվեց։

Առաւօտեան ժամը 5-ից հովանաւորող պետութիւնների նաւերից ափ իջաւ նաւաստիների մի վաշտ, ժապաւերը, իջեցրեց նաւահանգստի մուտքի բերդի ճակատին ծածանվող դրօշակը և հեռացրեց դրօշաձողը, թողնելով Բաստիոնում, ուր առաջ դրօշակն էր, միջազգային պահակախումբ, բաղկացած 50 հոգուց։ Նաւաստիները վերադարձան իրանց տեղերը։

Կրետէի ժանդարմերիան պահպանում է կարգ ու կանոնը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 5 օգոստոսի

Հավասի գործակալութեանը հաղորդում են Կանէայից, որ հովանաւորող պետութիւնների հիւպատոսները հաղորդեցին Կրետէի կառավարութեանը, որ յունական դրօշակը վաղը կը վերցվի։ Նրանք ուշադրութիւն դարձրին այն անուղղելի հետևանքների վրա, որպիսիները կարող էր ունենալ յարձակումը միջազգային զօրամասերի վրա։ Ժամանակաւոր կառավարութիւնը դիմեց ժողովրդին մի կոչով, որով խորհուրդ է տրվում բացարձակապէս հնազանդվել մեծ պետութիւնների կամքին։ (Հ. Գ.)

—

Բերլինում ստացված տեղեկութիւնների համեմատ, Անգլիան դիտաւորութիւն ունի կրետական հարցի լուծումը թողնել եւրոպական կոնֆերէնցիային և առաջարկել լիակատար ինքնավարութիւն տալ Կրետէ կղզուն օսմանեան գերիշխանութեան ներքոյ տասը տարով, և ապա թողնել Կրետէին, որ ինքն որոշէ իր ապագայ վիճակը ընդհանուր ձայնատուութեան միջոցով։

«Բերլիներ-Տագեբլատ» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են, որ դրութիւնը շատ սուր կերպարանք է ընդունել։ Թիւրքական կաբինէտի երեկվան նիստում զինուորական, ծովային և հասարակական աշխատանքների մինիստրները յայտնեցին, որ միակ լուծումն է պատերազմը։

—

Պարիզի «Temps» լրագրի թղթակցութեան մէջ հետաքրքրական տեղեկութիւններ կան Կրետէի մահմեդականների մասին։ Կրետէ կղզու բնակիչների ընդհանուր թիւն է 330,000 մարդ, որից մահմեդականները 28—29 հազար են, ուրեմն կազմում են ամբողջ ազգաբնակութեան 11%։ Ցեղական կողմից Կրետէի մահմեդականները ոչինչ նմանութիւն չունեն թիւրքերի հետ։ Նրանք նոյն յոյներն են, ծագում են մահմեդականութիւն ընդունած յոյներից և սովորաբար ուրիշ լեզու չը գիտեն, բացի յունարէնից։ Տեղական ազգային ժողովում նրանք 8 ներկայացուցիչներ ունեն, և մահմեդական պատգամաւորները այդպիսով կազմում են կրետական ամբողջ պարլամենտի ութերորդ մասը։ Մահմեդականներին թոյլատրվում է մտնել պետական և հասարակական ծառայութեան մէջ և Կրետէում ներկայումս պետական ծառայութեան մէջ գտնվում են 129 մահմեդականներ, իսկ քաղաքային հիմարկութիւններում ծառայում են 144 հոգի։ Երբ անցեալ տարվայ հոկտեմբերին յայտարարվեց կղզու միացումը Յունաստանի հետ և բոլոր քրիստոնեայ պաշտօնեաները երդում տուին հաւատարիմ լինել յունաց թագաւորին, մահմեդական պաշտօնեաներին, որոնք հրաժարվեցին երդում տալուց, երկու շաբաթով արձակուրդ տրվեց, որի ընթացքում նրանց քրիստոնեայ պաշտօնակիցները երդում տուին յունաց թագաւորին։ Մահմեդական պաշտօնեաներն այդպիսով ազատվեցին երդում տալուց կամ քրիստո-

նեայ ազգայնակութեան հետ ընդհարվելուց։ Սակայն, չը նայելով կատարեալ հաւասարութեանը, որ այժմ վայելում են ժամեդականները Կրետէում, նրանք ոչ ոքոն են նրանից, որ եւրոպական պետութիւնների զօրքերը հեռացան կղզուց, և չեն ցանկանում, որ Կրետէն միացվի Յունաստանի հետ։ «Temps» լրագրի թղթակիցը այդ գլխաւորապէս բացատրում է այն հանգամանքով, որ Կրետէի մահմեդականները, որոնք թիւրքական տիրապետութեան ժամանակ ընտելացած էին գերիշխող դիրք գրաւել, դժուարութեամբ են հաշտվում այժմեան կարգի հետ, երբ նրանք վայելում են նոյն իրաւունքները, ինչ որ քրիստոնեաներն ունեն։

ՅՈՒԶԻՉ ՕՐԵՐԸ ՇՎԷԴԻԱՅՈՒՄ

—

«Русск. Вѣд.» լրագրի յատուկ թղթակիցը հետեւեալ կերպով է նկարագրում գործադուլը Շվէդիայում։

«Եւ այսպէս, ընդհանուր գործադուլը Շվէդիայում յայտարարվեց երկաթէ անհրաժեշտութեան շնորհիւ. նա հետանք էր այն զործելակերպի, որին անշեղ հետեւում էին գործատէրերը։ «Մենք չենք կամենում կազմակերպված պրօլետարիատ, թող կոչի գիտակից բանուորը»—ահա շվէդական ձեռնարկողների գլխաւոր նշանաբանը։ Միանգամից ընդմիշտ պէտք է արմատախիլ անել այդ ախտը, վերադառնալ նախկին նահապետական ժամանակներին։ Եւ դրա հետեւանքն է կուի սուր ընաւորութիւնը, որը արտայայտվեան բոլոր լրագիրները համարում են «հակայական», «դասակարգային»...

«Շօշափված են սկզբունքներ, բանուորական շարժման հէնց արմատները, ահա թէ ինչու ամեն կողմերից օժանդակութիւն է հասնում Շվէդիա, ահա թէ ինչու դանիական, գերմանական, նորվէգիական, ֆին բանուորները այնպիսի մեծ հետաքրքրութեամբ հետեւում են այդ հրէշաւոր կուի զարգացմանը։

«Այո, հրէշաւոր է։ Երկու կողմերի կրած կորուստները ահագին են։ Ահա մօտաւոր, բայց արժանահաւատ թուանշաններ. գործադուլ են արել 330,000 բանուորներ, միջին թւով իւրաքանչիւր բանուոր վաստակում է 3 կրոն օրական, հետեւաբար կորուստը 990,000 կամ կլոր թւով մէկ միլիոն կրոն է։ Գործատէրերը իւրաքանչիւր բանուորից օրական զուտ արդիւնք ունեն 3 կրոն. աւելացրէք դրա վրա այն զումարները, որ նրանք ծախսում են լօկաուտ կազմելու համար, դուրս կը գայ, որ գործատէրերը գործադուլի իւրաքանչիւր օրվայ համար վնաս են կրում 3 միլիոնից աւելի, կամ առաջին հինգ օրում մօտաւորապէս 15 միլիոն կրոն կամ մեր փողով մօտ 8½ միլիոն ռուբլի։

«Սակայն ինչ ելք էլ որ ունենայ այդ ծանր կռիւը, ամենքն այն կարծիքի են, որ գործատէրերի դաշնակցութիւնը խիստ վտանգաւոր խաղ է սկսել և որ շվէդական արդիւնաբերութեան փառաւոր ծաղկումը վերջին 5—6 տարիների ընթացքում ոչ թէ շվէդական ձեռնարկողների ջանքերի և առևտրական հանճարի արդիւնք է, այլ օտար դրամագլուխների հոսանքի և շվէդական բանուորների բարձր կուլտուրական մակերեւոյթի, որոնք գեղեցիկ կերպով կազմակերպված են և տեխնիկական փորձառութիւն ունեն։

«Ասածներիս, ի հարկէ, ամենապայծառ ապացոյցն է այն օրինակելի կարգը, այն բուն կուլտուրական զսպվածութիւնը և զգուշութիւնը, որով տարվում է գործադուլը վերջին հինգ օրերի ընթացքում։ Այն ժամանակ, երբ պահպանողական լրագիրները լիքն են ինսինուացիաներով և անճիշդ տեղեկութիւններով գործադուլի ընթացքի մասին, այն ժամանակ, երբ վախեցած քաղաքացիները գնել են բոլոր առձեռն հրացանները և «սպիտակ գվարդիայի» նման մի բան են կազմակերպել, բանուորները պահում են իրանց՝ ամբողջ երկրի մէջ աչքի ընկնող հանգստութեամբ և մեծ տակտով, խուսափում են փողոցային ցոյցերից, դրօշակներով փողոցներում պտտելուց և բռնութիւններ գործ դնելուց։

«Ո՞րքան նիւթական միջոցներ ունեն երկու «պատերազմող» կողմերը։ Ո՞րքան ժամանակ կարող է շարունակվել մի կողմից լօկաուտը, միւս կողմից՝ ընդհանուր գործադուլը։ Ասում են, որ գործատէրերը 700,000 կրոն ծախս ունեն օրական և լօկաուտը կարող է շարունակվել 14 օր։ Իսկ բանուորները, ասում են, կարող են դիմանալ երեք շաբաթ, ուրեմն աւելի երկար, քան գործատէրերը»։

Մ. ՁԵՐԱԶԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

—

Թիւրքահայոց ազգ. երեսփ. ժողովի Ա. ատենապետ Մ. Զերազ, որ վերջերս միայն Կովկասից վերադարձել էր Կ. Պոլիս, յուլիսի 17-ին ազգ. ժողովի նիստում կարդացել է հետեւեալ տեղեկագիրը, որ վերաբերում է Կ. Պոլսից մինչև Էջմիածին Վեհ. Հայրապետի հետ իր կատարած ուղեւորութեանը.

Երեսփոխան հարք և տիրք.

Ազգ. Ժողովը իր մայիս 22-ի նիստին մէջ պաշտօն յանձնեց ինձ ուղեկցել Ամենայն Հայոց Հայրապետին՝ Պետերբուրգ և անկէ մինչև Մայր Աթոռ։ Յունիս 28-ին հասանք Վաղարշապատ և Մ. Կաթողիկոսը ողջ և առողջ յանձնելէ վերջ Էջմիածնի միաբանութեան՝ յուլիս 12-ին վերադարձայ Պոլիս։ Հայ ժողովուրդը արտաքին ու ներքին տեսակէտներով օգտուեցաւ այն ուղեւորութենէն, որ ազգընտիր Կաթողիկոսին համար յաղթանակներու անընդհատ շարք մը եղաւ։ Արտաքին տեսակէտով կարեւորագոյններն եղան այն տեսակցութիւնները, զորս Կաթողիկոսը ունեցաւ Ռուսիոյ Ցարին, մինիստր-նախագահ Ա. Մ. Ստոլիպինի և Կովկասի Փոխարքայ կոմս Վօրոնցովի հետ։ Թէև ներկայ չէի այդ տեսակցութեանց, բայց կրցայ ստուգել թէ անոնք յաջողած են փարատել այն կասկածները, որոնք կը ծանրանային Հովուապետին ու իր հօտին վրայ։ Մատթէոս Կաթողիկոս պատասխանած է իր անկեղծ ու կորովի շեշտով, թէ ինք վեր պիտի մնայ ամեն կուսակցութենէ, թէ իր պաշտօնը հոգեւոր ու կրթական է և ոչ թէ քաղաքական և թէ իր նշանաբանը պիտի ըլլայ «Ցայ զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ», և յայտարարած է, թէ հայ ժողովուրդը անջնջելի ծդտում ջրնի բնաւ ոչ Ռուսաստանի և ոչ Թիւրքիայի մէջ։ Ռուս կառավարութեան բաւական եղած էին այս բացատրութիւնները. ան խոստացած է տեղութեամբ կարդալիս՝ ակնյայտնի են դառնում բազմաթիւ դէպքերում։ Օրինակ, Վէյնինգէրի ֆօրմուլայով կնոջ մէջ եղած առնական տարրի աննշան քանակութիւնը թոյլ է տալիս այնու ամենայնիւ հոգեպէս և մասաւորապէս դէթ որոշ չափով լինել դրական. նա թոյլ է տալիս, որ կինը կարող է նոյնիսկ տաղանդաւորութեան հասնել, սակայն կարուկ կերպով ժխտում է կնոջ մէջ հանճարեղութեան կարելիութիւնը. միւս կողմից՝ հանճարը, ըստ Վէյնինգէրի, լինում է զանազան աստիճաններով։ Եթէ այդպէս է, ինչու կինը,—որը մինչև այժմ հնարաւորութիւն չէ ունեցել իր գիտութեան շրջանում արտայայտվել ազատօրէն, հրապարակ իջնել իր ամբողջ էութեամբ, ազատ ամեն մի նախապաշարումից և կաշկանդումներից,—ապագայում առնականութիւնը առհասարակ ու նրա յատկանիշը՝ հանճարեղութիւնը չեն երևալու բէլեֆ կերպով. ինչու գիտական խիստ մանրակրկիտ անալիտիկը մոռանում է այս դէպքում էվոլիւցիօնիզմը և իգական սեռի սահմանափակ ու կաշկանդված անհատականութիւնը դնում քարացման հողի վրա...

Չը կայ բացարձակ կին, ուրեմն չը կայ նաև բացարձակ այր. եթէ այդպէս է՝ ինչպէս ուրեմն այրը դառնում է միկրօկօսմ, իսկ կինը ոչնչութիւն, քանի որ կանացի «ոչնչութիւնը» ճակատագրապէս կապված է առնականութեան հետ, և ընդհակառակը։ Եթէ մինչև այժմ չեն գտնված անհատի մէջ տիրապետող «առնական» և «կանացի» տարրերի ճիշդ յարաբերականութեան անփոփոխ օրէնքները, ապա ուրեմն ինչպէս ասել, ինչպէս հաստատել, որ յարաբերականութիւնը անգամ արտաքին բարերար պայմանների շնորհիւ չէ ենթարկվելու որևէ փոփոխութեան, ինչպէս կրկնել, ինչ փաստերի, երևոյթների վրա յենվել՝ ընութեան մէջ բազմադարեան էվոլիւցիայի արդիւնք մարդու զարգացումը կանգած հռչակելու համար...

Այսպիսով՝ երբ չը կայ իդէալական տիպ այր կամ կին, երբ իրականութեան մէջ անհատի անխուսափելի բովանդակութիւնն են կազմում այդ երկու տարրերը, ուրեմն միանգամայն ապարդիւն են այն բոլոր երկիւղները ու սարսափները, որոնց ծանրութեան, ճնշման տակ յուզվում էր Վէյնինգէրը։ Նրա հարուստ ֆանտազիան և դաժան տրամաբանութիւնը, դժբաղդաբար, եզրափակումների ժամանակ խիստ չարաչար դաւաճանում է, և այն, ինչ կարելի էր եզրակացնել համապատասխան երևոյթներից, Վէյնինգէրը շատացում է կախարդված շրջանակի կախարդված պտուտակը դառնալ... Ելքը մէկ հատ էր. մարդու օրգանական թերի, սխալ կազմուածքի համար վտանգաւոր դատ բաց անել սֆինքս-ընութեան դէմ... Եւ Վէյնինգէրը իր հարուստ հոգու խորիմաստ արտայայտութիւններով գիմում է այդ ճակատագրական քայլին...

Կինը, ըստ Վէյնինգէրի, այն սոսկալի պատուարն է, որով «կուսական» այրը զրկված է զուտ հոգեկան անհատ դառնալու հնարաւորութիւնից. և կնոջ այդպիսի զօրեղագոյն հակազդօն դառնալու գլխաւոր իմպուլսը որպէս թէ թաղնված է սեռի մէջ, այն սեռի, որի «իդեալական» մարմնացումն է նա... Որպիսի մոլորութիւն։ Ապա տղամարդու հերոսութիւնը սեռական կեանքի շատ անգամ խիստ հակաբնական արտայայտութիւնների մէջ։ Անշուշտ այստեղ ևս Վէյնինգէրը պիտի ասէր, թէ դա արդիւնք է կ-ջ այն բաժնի, որը գտնվում է ամեն մի այր մարդու բովանդակութեան մէջ։ Սակայն չէ՞ որ չը կայ անհատ, որը չունենար այդ բաժինը, և ուրեմն արժէ՞ր խօսել այնպիսի աբստրակցիաների մասին, որոնք ոչ միայն առնչութիւն չունեն իրական կեանքի հետ, այլ և հակասում են ընութեան մեզ ուսուցանող հիմնական գաղափարին։ Եթէ կինը սեռ է, այրն էլ է սեռ. և եթէ սեռականութիւնը «յանցանք» է, «մեղապարտութիւն» և «անբարոյականութիւն», ապա ուրեմն երկուսն էլ՝ հակառակ ընութեան վեհագոյն կամքի՝ պէտք է դատապարտվեն գերագոյն ամբաստանութեան. իր կարգին, ուրեմն, երկրագունդն էլ, տիեզերքն էլ ենթարկվեն յաւիտենական քարացման, որովհետև մարդը երկրագնդի վրա կազմում է տիեզերական հսկայ շղթայի վերին օղակներից մէկը...

Սակայն այդպէ՞ս է արդեօք. տղամարդու վախճանական նպատակի իրագործման առջև, այն է՝ հոգեպէս կօսմոսի հետ միանալու ձգտման դէմ կանգնած է կինը իր անսահման «մեղսակցութեամբ»։ Ի՞նչ եթերական սաւառնումն... Պէտք է իջնել ցած, կեանքի այն հակասական ժխորը, ուր ամեն երևոյթ մարդկային հասարակական կեանքում հիւսված է այր և կնոջ ընդհանուր գոյութեամբ։ Եւ այն բոլոր առաքինութիւնները, որոնք յատուկ են մարդ-այրին, յատուկ են նաև մարդ-կնոջը. այնպէս էլ՝ այն բոլոր բացասական գծերը, որոնք յատուկ են կնոջը, հաւասարապէս յատուկ են նաև տղամարդուն։ Եթէ առաջնի մէջ կինը թոյլ է, իսկ երկրորդի մէջ առաւել ակնյայտնի, դրա պատճառը խորապէս արմատացած է տիրող սօցիալ-տնտեսական-քաղաքական պայմանների մէջ։ Այդ մասին սակայն յետոյ։

Հոգեկան խորին յուզմունքներով, սրտի անօրինակ թափով գրելով այսպիսի մի զօրեղ ֆիլիպպիկ սեռական կեանքի դէմ, տրամաբանական անհրաժեշտութեամբ հրապարակ պիտի նետվէր Վէյնինգէրի առջև մարդկային գոյութեան վախճանի ճակատագրական հարցը։

Ի՞նչ երջանկութիւն մարդկային ցեղի ներկայութիւնից երկրագնդի վրա,—բացագանչում է Վէյնինգէրը.—ինչ է շահում տիեզերքը սեռական անարդ կեանքով զոյացող մեզանիկ բազմութիւնից... Ցեղի աճեցման խաւար պրօցէսի դադարումը՝ տիեզերքի բարոյական վեհագոյն գաղափարի իրականացումն է, որովհետև գերագոյն իդեալականութիւնների մարմնացում առնականութիւնը՝ ազատ իգական-սեռական կաշկանդումներից՝ տիեզերքի—կօսմոսի հետ հոգեպէս ձուլվելու, միանալու ձգտումը պիտի իրականացնէ։

Անշուշտ այսօրինակ յոռետես միտքը պիտի անխուսափելիօրէն տանէր, հացնէր Վէյնինգէրին այն մահառիթ գնդակին, որի զոհը դարձաւ նաև փիլիսոփաներից յոռետեսագոյնը՝ Հարտմանը։

Սակայն անհրաժեշտ ենք համարում նախ քան վերջակէտը արձանագրել և այն, որ իր փիլիսոփայութեան սկիզբը Վէյնինգէրը առնում է աստուածացրած Գաղատոնից, անցնում քրիստոնէական կրօնի և Կանտի բարոյական բարձրագոյն իդէալի բովերից։

Ինչ էլ որ լինի, պէտք է անաչառութեամբ արձանագրենք, որ նրա հոգեկան վշտալից ձգտումների պանծալի նպատակն էր անհատի հոգեկան բարձրացումը, կատարելութիւնն ու իդէալականացումը։ Պէտք է զարմանալ, ապշել այն հսկայական պաշարի, գիտական այն լուրջ պատրաստութեան վրա, որով անօրինակ կերպով օժտված էր մարի տխուր քան-երեքամեայ Օտտօ Վէյնինգէրը։

Վէյնինգէրի մասին այսքանը բաւական համարելով, մենք այսուհետև պիտի զբաղվենք բացառապէս այն հարցով, թէ կինը իսկապէս ինչ էր ներկայացնում պատմական և նախապատմական անցեալում և ինչ կարող է սպասել նրան ապագայում։

Սուրբաթեան

(Վերջ առաջին մասի)

ՁԵՁԱՆՈՒՄ ԵՒ ՄԵՁԱՆՈՒՄ

—

Իզմիրլեան Վեհ. Կաթողիկոսը ձեր մէջն է այլեւս։ Մեր անկեղծ խնդակցութիւնները կը յայտնենք այսու մասնաւորապէս ձեզ, ռուսահայերդ, մաղթելով որ նախկին Երկաթեայ Պատրիարքին ներկայութիւնը իր բարերար ներգործութիւնը բերէ թէ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

—

Ղազախ (Ղազ. գաւ.), 2 օգոս.

Ղազախի գաւառի հայ ազգաբնակութիւնը, ընդհանրապէս վերցրած, խարխափում է տգիտութեան թանձրացած խաւարի մէջ. զարգ չը կայ զրեթէ (ոչ մի գիւղում), թէև բացառիկ երևոյթներ են ներկայացնում Ղազախի շրջանում մի քանի գիւղեր, օրինակ, Բարվանսարա, Դիլիջան և դրանց թւում մի քանիսը։ Ուրեմն ուսումնական և տնտեսական տեսակէտից մեր գաւառը գտնվում է աննախանձելի վիճակի մէջ իր ընդհանուր գիւղերով։

Դաստիարակութեան, ուսման և բարոյականութեան փոխարէն ներկայ մատաղ սերունդը աւելի շուտ ընտելանում է աւազակութեան, խարեբայութեան և հայհոյանքների։ Ահաւասիկ այսպիսի քայքայված և ողբալի դրութեան է ենթարկված ամբողջ գաւառը։

Շինական հասայնքում ազդեցիկ դերակատարներ են խսկապէս գիւղական քահանան, տանուտէրը, երէցփոխը և սրանց աջակցող, ժողովրդի շահերին նուիրված գիտակից երիտասարդութիւնը։ Սակայն այդ ազդեցիկների միջև բացակայում է սէր, բարի նախանձ, միաբանութիւն և համերաշխութիւն. այդպիսով խորտակվում են այն բոլոր ծրագիրները, որ վերաբերում են գիւղական համայնքի բարոյական, կրթական և տնտեսական առաջադիմութեան՝ ներկայ մօմենտում հրատապ խնդիրներից մէկն ևս, բացի դպրոցներ բանալուց, հացի շահեմարան և զանազան արհեստանոցներ շինելուց, ժողովրդի ազգասպասութիւնն է։ Զուտնեք ֆեյդերական կայան, դեղատուն, որոնք գիւղացիներին անհրաժեշտ են։

Մտէք գաւառս գիւղերը և տեսէք, թէ քանի-քանի ընտանիքներ տառապում են ժանվան ժահի մէջ։

Ցանկալի էր, որ մեր կուլտուրական հիմնարկութիւնները ուշք դարձնէին և այս տխուր հանգամանքի վրա։ Փոքրիկ գիւղերն անգամ հարիւրաւոր զոհեր են տուել այս տարի։

Նիկողայոս

—

Նուխի, 1 օգոստոսի

Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը, մօտ 20 օր Նուխում մնալուց յետոյ, յուլիսի 29-ին ուղեւորվեց դէպի Շուշի։ Այդ ժամանակամիջոցում նա այցելեց Ճալէթի, Գիսու վանքերը, Վարդաշէն և Կախ-աւան։ Մի քանի ամիս է, որ Ճալէթի վանքը թափուր էր վանահօրից։ Վերջին վանահայրը իր ապիկարութեան պատճառով հեռացված էր։ Վանքի դրութիւնը տեսնելով առաջնորդը համոզվեց, որ վանահայր նշանակելը աւելորդ է. խոստացաւ կարգադրել, որ վանքը յանձնվի Նուխու և Ճալէթի դպրոցների հոգաբարձութիւնների պահպանութեանը և վանքի եկամուտը յատկացվի նոյն հոգաբարձութիւնների խնամքին յանձնված դպրոցներին, որոնք նիւթական պատճառով փակման վտանգին են ենթարկված։

Վարդաշէնում առաջնորդը մնաց մի օր. այդ օր գնաց գիւղին շատ մօտ գտնվող Եղիշէ-առաքեալ ուխտատեղին, որը մինչև կոխների պատճառ է դարձել հայ ու յունադաւան հովարիւն ուսիների միջև։ Առաջնորդը խոստացաւ նոր դատ սկսել վերջնականապէս աղատելու ուխտատեղին յունադաւանների անտեղի ոտնձգութիւններից։

Կախ աւանում, իմանալով դպրոցի անապահով լինելը, ցանկացաւ տեղի ընակիչ հարուստ վաճառականներից մի գումար հանգանակելով ֆոնդ կազմել դպրոցի համար, բայց այդ նրան չաջողվեց, որի պատճառով առաջնորդը դժգոհ հեռացաւ Կախից։

Նուխում նա ձեռնադրեց մի դպրոցական ուսուցչի՝ Վարդաշէն գիւղի համար երկրորդ քահանայ։

Տղայոց դպրոցի կիսատ շինութեան կառուցումը, որ կանգ էր առել եկեղեցական փողերի ծախսելու իրաւունք չը ստանալու պատճառով, սկսվեց, որովհետև առաջնորդը թոյլ տուաւ ծախսել եկեղեցիների գումարներից։ Առաջարկեց միացնել եկեղեցիների և դպրոցի բիւջէն և պահել դպրոցը իր և եկեղեցիների եկամուտներով։ Այս առաջարկը սեռ ուրախութեամբ ընդունվեց հոգաբարձութեան և ժողովրդի կողմից։

Քաղաքիս ս. Մինաս եկեղեցու երէցփոխ և հոգ. կառավարութեան քարտուղար Կ. Փիրզադեանի դէմ նոյն կառավարութեան բարձրացրած բողոքը, որով մեղադրվում էր Փիրզադեանը մի շարք զեղծումների համար թէ որպէս երէցփոխ և թէ որպէս քարտուղար, առաջնորդը քննեց և քննութիւնից յետոյ արձակեց պաշտօններից։ Քննութիւնը պարզեց, որ Փիրզադեանը շատ փոքր է իւրացրել եկեղեցուց և կեղծիքներ գործել հոգ. կառավարութեան մէջ։

Եկեղեցապատկան փողը իւրացնելու համար հ. իշխանութիւնը Փիրզադեանին ենթարկելու է մարմնաւոր իշխանութեան դատի։

Բ. Փ.

—

Ղնախ, 3 օգոստոսի

Անցեալները հաղորդել էինք, որ բացառաբար սղնախեցի ինժեներ-տեխնօլոգ Լ. Մելիք-Նուբարեանը բաց է անում հայոց դպրոց Ներքին-Մաչխանի գիւղում։ Այս գործի առիթով երէկ Սղնախի գործակալի հետ գնացինք Ներքին Մաչխանի գիւղը։ Գործակալ քահանան ժողովելով գիւղացիները հաղորդեց նրանց, որ հոգաբարձունները հաստատված են առաջնորդից, ուստի յորդորեց նրանց սեպտեմբերից բանալ դպրոց։

Գիւղացիներն ուրախացան և խոստացան իրանց կողմից ևս օգնել դպրոցին։ Գործակալը նոյնպէս մէջնորդել է Մելիք-Նուբարեանի առաջ, խնդրելով վերանորոգել դպրոցի համար յատկացրած շէնութիւնը, որ պատկանում է նոյն Մելիք-Նուբարեանին։ Դպրոցը պէտք է կոչվի «Լևոն Մելիք-Նուբարեան»։ Դպրոցի պահպանութեան համար Մելիք-Նուբարեանը տարեկան տալիս է 250 ր. հինգ տարի ժամանակով։

Այս դպրոցը, գտնվելով Ներքին Մաչխանում, կը լինի կենտրոնական դպրոց հարեան գիւղերի համար, որտեղ ապրում են մօտ 60 տուն վրացախօս հայեր։ Գիւղացիները խնդրեցին, որ Նաստմբարի ուխտատեղի արդիւնքը, որ առաջ յատկացված էր Սղնախի հայոց դպրոցին, այսուհետև իրանց

---

*) Տես «Մշակ» № № 161, 163, 164, 165, 166, 167, 168, 169 և 170.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ*)

—

Ինչպէս տեսանք, կինը,—շեշտում է Վէյնինգէրը,—իրականութեան մէջ գոյութիւն ունի՝ առնական էլէմենտի աննշան խառնուրդով, ուստի աբսոլիւտ կին չը կայ։ Եւ այն կանացի էլէմենտը, որ գերակշռում է կանանց մէջ, միանգամայն բացասական տարր է, նոյնիսկ ոչնչութիւն։ Ենթադրենք, սակայն, որ այդպէս է, ենթադրենք, որ «կին» կոչվող ինքնուրոյն «սուբստանց» գոյութիւն ունի և նա միանգամայն ոչնչութիւն է։ Բայց ինչու Վէյնինգէրը այդօրինակ «իրական» եզրակացութիւն հանելուց յետոյ կուրօրէն ընկնում է ողբերգական հակասութեան մէջ. չէ՞ որ աբսոլիւտ, բացարձակ կին չը կայ, այլ միշտ խառն առնականի թեկուզ ինչին մասնիկով, որը օժտված է գիտակցութեամբ, յիշողութեամբ, հանճարեղութեամբ և ամեն մի դրական յատկանիշներով։ Ուրեմն եթէ այդպէս է, եթէ Վէյնինգէրը ընդունում է, որ կինը առհասարակ զուրկ չէ առնականութիւնից, ինչու ուրեմն չընդունել և այն, որ ապագայում այդ դրական տարրը կարող է զարգանալ կնոջ մէջ մինչև կատարելութիւն։ Հակասութիւնները, ճիշդ է, արդիւնք են փիլիսոփայի ինչ-որ գաղտնի վրէժխնդրութեան, թունաւորված տրամադրութեան, որի զօրեղ արտայայտումները մշտապէս եղել են ալեկոծ մտքերի յախուռն տարափով։ Գրաւիչ լեզուի, խորին համոզմունքի, գաղափարական կորովի ճնշման տակ ընթերցողը կատարեալապէս յափշտակվում, գրաւվում է, և այն ամենը, ինչ որ յիշեցինք վերևում, ամենամեծ վարպետութեամբ քօղարկվում են ընթերցողից։ Հակասութիւնները՝ տրամաբանական հետեւողութեամբ կարդալիս՝ ակնյայտնի են դառնում բազմաթիւ դէպքերում։ Օրինակ, Վէյնինգէրի ֆօրմուլայով կնոջ մէջ եղած առնական տարրի աննշան քանակութիւնը թոյլ է տալիս այնու ամենայնիւ հոգեպէս և մասաւորապէս դէթ որոշ չափով լինել դրական. նա թոյլ է տալիս, որ կինը կարող է նոյնիսկ տաղանդաւորութեան հասնել, սակայն կարուկ կերպով ժխտում է կնոջ մէջ հանճարեղութեան կարելիութիւնը. միւս կողմից՝ հանճարը, ըստ Վէյնինգէրի, լինում է զանազան աստիճաններով։ Եթէ այդպէս է, ինչու կինը,—որը մինչև այժմ հնարաւորութիւն չէ ունեցել իր գիտութեան շրջանում արտայայտվել ազատօրէն, հրապարակ իջնել իր ամբողջ էութեամբ, ազատ ամեն մի նախապաշարումից և կաշկանդումներից,—ապագայում առնականութիւնը առհասարակ ու նրա յատկանիշը՝ հանճարեղութիւնը չեն երևալու բէլեֆ կերպով։ Ինչու գիտական խիստ մանրակրկիտ անալիտիկը մոռանում է այս դէպքում էվոլիւցիօնիզմը և իգական սեռի սահմանափակ ու կաշկանդված անհատականութիւնը դնում քարացման հողի վրա...

Չը կայ բացարձակ կին, ուրեմն չը կայ նաև բացարձակ այր. եթէ այդպէս է՝ ինչպէս ուրեմն այրը դառնում է միկրօկօսմ, իսկ կինը ոչնչութիւն, քանի որ կանացի «ոչնչութիւնը» ճակատագրապէս կապված է առնականութեան հետ, և ընդհակառակը։ Եթէ մինչև այժմ չեն գտնված անհատի մէջ տիրապետող «առնական» և «կանացի» տարրերի ճիշդ յարաբերականութեան անփոփոխ օրէնքները, ապա ուրեմն ինչպէս ասել, ինչպէս հաստատել, որ յարաբերականութիւնը անգամ արտաքին բարերար պայմանների շնորհիւ չէ ենթարկվելու որևէ փոփոխութեան, ինչպէս կրկնել, ինչ փաստերի, երևոյթների վրա յենվել՝ ընութեան մէջ բազմադարեան էվոլիւցիայի արդիւնք մարդու զարգացումը կանգած հռչակելու համար...

Այսպիսով՝ երբ չը կայ իդէալական տիպ այր կամ կին, երբ իրականութեան մէջ անհատի անխուսափելի բովանդակութիւնն են կազմում այդ երկու տարրերը, ուրեմն միանգամայն ապարդիւն են այն բոլոր երկիւղները ու սարսափները, որոնց ծանրութեան, ճնշման տակ յուզվում էր Վէյնինգէրը։ Նրա հարուստ ֆանտազիան և դաժան տրամաբանութիւնը, դժբաղդաբար, եզրափակումների ժամանակ խիստ չարաչար դաւաճանում է, և այն, ինչ կարելի էր եզրակացնել համապատասխան երևոյթներից, Վէյնինգէրը շատացում է կախարդված շրջանակի կախարդված պտուտակը դառնալ... Ելքը մէկ հատ էր. մարդու օրգանական թերի, սխալ կազմուածքի համար վտանգաւոր դատ բաց անել սֆինքս-ընութեան դէմ... Եւ Վէյնինգէրը իր հարուստ հոգու խորիմաստ արտայայտութիւններով գիմում է այդ ճակատագրական քայլին...

Կինը, ըստ Վէյնինգէրի, այն սոսկալի պատուարն է, որով «կուսական» այրը զրկված է զուտ հոգեկան անհատ դառնալու հնարաւորութիւնից. և կնոջ այդպիսի զօրեղագոյն հակազդօն դառնալու գլխաւոր իմպուլսը որպէս թէ թաղնված է սեռի մէջ, այն սեռի, որի «իդեալական» մարմնացումն է նա... Որպիսի մոլորութիւն։ Ապա տղամարդու հերոսութիւնը սեռական կեանքի շատ անգամ խիստ հակաբնական արտայայտութիւնների մէջ։ Անշուշտ այստեղ ևս Վէյնինգէրը պիտի ասէր, թէ դա արդիւնք է կ-ջ այն բաժնի, որը գտնվում է ամեն մի այր մարդու բովանդակութեան մէջ։ Սակայն չէ՞ որ չը կայ անհատ, որը չունենար այդ բաժինը, և ուրեմն արժէ՞ր խօսել այնպիսի աբստրակցիաների մասին, որոնք ոչ միայն առնչութիւն չունեն իրական կեանքի հետ, այլ և հակասում են ընութեան մեզ ուսուցանող հիմնական գաղափարին։ Եթէ կինը սեռ է, այրն էլ է սեռ. և եթէ սեռականութիւնը «յանցանք» է, «մեղապարտութիւն» և «անբարոյականութիւն», ապա ուրեմն երկուսն էլ՝ հակառակ ընութեան վեհագոյն կամքի՝ պէտք է դատապարտվեն գերագոյն ամբաստանութեան. իր կարգին, ուրեմն, երկրագունդն էլ, տիեզերքն էլ ենթարկվեն յաւիտենական քարացման, որովհետև մարդը երկրագնդի վրա կազմում է տիեզերական հսկայ շղթայի վերին օղակներից մէկը...

Սակայն այդպէ՞ս է արդեօք. տղամարդու վախճանական նպատակի իրագործման առջև, այն է՝ հոգեպէս կօսմոսի հետ միանալու ձգտման դէմ կանգնած է կինը իր անսահման «մեղսակցութեամբ»։ Ի՞նչ եթերական սաւառնումն... Պէտք է իջնել ցած, կեանքի այն հակասական ժխորը, ուր ամեն երևոյթ մարդկային հասարակական կեանքում հիւսված է այր և կնոջ ընդհանուր գոյութեամբ։ Եւ այն բոլոր առաքինութիւնները, որոնք յատուկ են մարդ-այրին, յատուկ են նաև մարդ-կնոջը. այնպէս էլ՝ այն բոլոր բացասական գծերը, որոնք յատուկ են կնոջը, հաւասարապէս յատուկ են նաև տղամարդուն։ Եթէ առաջնի մէջ կինը թոյլ է, իսկ երկրորդի մէջ առաւել ակնյայտնի, դրա պատճառը խորապէս արմատացած է տիրող սօցիալ-տնտեսական-քաղաքական պայմանների մէջ։ Այդ մասին սակայն յետոյ։

Հոգեկան խորին յուզմունքներով, սրտի անօրինակ թափով գրելով այսպիսի մի զօրեղ ֆիլիպպիկ սեռական կեանքի դէմ, տրամաբանական անհրաժեշտութեամբ հրապարակ պիտի նետվէր Վէյնինգէրի առջև մարդկային գոյութեան վախճանի ճակատագրական հարցը։

Ի՞նչ երջանկութիւն մարդկային ցեղի ներկայութիւնից երկրագնդի վրա,—բացագանչում է Վէյնինգէրը.—ինչ է շահում տիեզերքը սեռական անարդ կեանքով զոյացող մեզանիկ բազմութիւնից... Ցեղի աճեցման խաւար պրօցէսի դադարումը՝ տիեզերքի բարոյական վեհագոյն գաղափարի իրականացումն է, որովհետև գերագոյն իդեալականութիւնների մարմնացում առնականութիւնը՝ ազատ իգական-սեռական կաշկանդումներից՝ տիեզերքի—կօսմոսի հետ հոգեպէս ձուլվելու, միանալու ձգտումը պիտի իրականացնէ։

Անշուշտ այսօրինակ յոռետես միտքը պիտի անխուսափելիօրէն տանէր, հացնէր Վէյնինգէրին այն մահառիթ գնդակին, որի զոհը դարձաւ նաև փիլիսոփաներից յոռետեսագոյնը՝ Հարտմանը։

Սակայն անհրաժեշտ ենք համարում նախ քան վերջակէտը արձանագրել և այն, որ իր փիլիսոփայութեան սկիզբը Վէյնինգէրը առնում է աստուածացրած Գաղատոնից, անցնում քրիստոնէական կրօնի և Կանտի բարոյական բարձրագոյն իդէալի բովերից։

Ինչ էլ որ լինի, պէտք է անաչառութեամբ արձանագրենք, որ նրա հոգեկան վշտալից ձգտումների պանծալի նպատակն էր անհատի հոգեկան բարձրացումը, կատարելութիւնն ու իդէալականացումը։ Պէտք է զարմանալ, ապշել այն հսկայական պաշարի, գիտական այն լուրջ պատրաստութեան վրա, որով անօրինակ կերպով օժտված էր մարի տխուր քան-երեքամեայ Օտտօ Վէյնինգէրը։

Վէյնինգէրի մասին այսքանը բաւական համարելով, մենք այսուհետև պիտի զբաղվենք բացառապէս այն հարցով, թէ կինը իսկապէս ինչ էր ներկայացնում պատմական և նախապատմական անցեալում և ինչ կարող է սպասել նրան ապագայում։

Սուրբաթեան

(Վերջ առաջին մասի)

ՁԵՁԱՆՈՒՄ ԵՒ ՄԵՁԱՆՈՒՄ

—

Իզմիրլեան Վեհ. Կաթողիկոսը ձեր մէջն է այլեւս։ Մեր անկեղծ խնդակցութիւնները կը յայտնենք այսու մասնաւորապէս ձեզ, ռուսահայերդ, մաղթելով որ նախկին Երկաթեայ Պատրիարքին ներկայութիւնը իր բարերար ներգործութիւնը բերէ թէ

դպրոցին տրվի։ Գործակալը խոստացաւ անել պատշաճաւոր միջնորդութիւն։ Այսպէս, ուրեմն, Սղնախի գաւառում բացվում են հայկական երկու նոր դպրոցներ՝ Մաչխանում և Ցարսկիէ-Կօլոդցիում։ N. N.

—

Ղարաբիլիսա, 3 օգոստոսի

Ցայսմի է, որ երկաթուղու կայարաններում բուֆէտչիկները յայտնի արտօնութիւններ են վայելում մթերքներ վաճառելում։ Սակայն չը նայած դրան ագահ բուֆէտչիկները չեն խղճահարվում կեղծիք մտցնել այնպիսի բանում, ինչպիսին է կաթը, որի շիշը (երկու և կէս բաժակը) բացի քաղաքների կայարաններից արժէ 5 կ.։ Այդպիսի շահագործումը ճանապարհորդներից աւելի է կատարվում Թիֆլիս-Զուլֆա գնի վրա, քան ուրիշ տեղերում։

Մի քանի օր առաջ ակնատես էի Սանահին կայարանում ճանապարհորդների բողոքին ընդդէմ երրորդ կարգի բուֆէտչիկի, որը թոյլ էր տուել ծախել մի զզուելի կաթ, որից միայն մարդու սիրտ էր խառնում։ Եթէ մի այսպիսի չնչին գին ունեցող բան, ինչպիսին է կաթը, թոյլ են տալիս կեղծել, ապա կարելի է երևակայել, թէ ինչպէս են վերաբերվում դէպի քիչ աւելի արժէք ունեցողները։ Հրաւիրում ենք երկաթուղու վարչութեան ուշադրութիւնը ճանապարհորդների այս միանգամայն արդար բողոքի վրա և յոյս ունենք, որ շուտով վերջ կը տրվի շահագործութեան այդ ինքնատիպ տեսակին։

Այսօր իր կեանքին վերջ տուեց տեղացի գեղջկուհի Զ. Խումարեանը, կախվելով առաստաղից։ Տեղացիները գովասանքով էին խօսում նրա մասին, իբրև համեստ և աշխատաւոր կնոջ մասին, և վերագրում են այդ անձնասպանութիւնը նրա ընտանեկան դառն կեանքին։

Գիւղից մի քանի վերստ հեռաւորութեան վրա գտնվող Վարդանլու թուրքաբնակ գիւղում այսօր սպանվել են երկու թուրք։ Զարագործը աղատ է։ Սպանութիւնը անձնական վրէժխնդրութեան հետևանք է։

Եկւոր

ԱԴԱՆԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպելով այսօր լուսանկար Ա. Բուդաղեանի նամակը, խմբագրութիւնս յայտնում է, որ նրա մեզ ուղարկած դուսաւոր լուսանկարները եռաստեան կեանքից, արդարև, գեղեցիկ և գեղարուեստական են և կարող են սեղանի ալբոմի զարդ ծառայել։

Զը նայելով որ, Ա. Բուդաղեանի ասելով, գինը 50 կ. է, բայց պատկերները յատկացված լինելով բարեգործական նպատակի՝ կարելի էր գինը բարձրացնել. մենք այնուամենայնիւ որոշեցինք գինը թողնել նոյնը, այն է 50 կ., որպէս զի ժամչելի լինի ամենքին։

Ցաւալի է խոստովանվել, որ Ադանայի սոսկալի աղէտի զոհերի որբերի օգտին արված կոչերը լայն արձագանք չեն գտնում հայ ժողովրդի խաւերի մէջ։ Դր. Զալխուշեանի հրատարակած ժողովածուից շատ քիչ օրինակներ են վաճառված մինչև այսօր, մինչ մենք կարծում էինք, որ մի քանի օրվայ ընթացքում բոլոր օրինակները պէտք է գնվեին։

Ուստի նորից յորդոր ենք կարդում հայ տեղւոյդ մեր հասարակական կարևոր գործերում և թէ կովկասեան եկեղեցա դպրոցական բազմակնճիռ խնդիրներուն մէջ։

Իզմիրլեանն ալ Հայրիկին պէս՝ մեր կեանքի ամենէն դժբաղդ, դժուարին և փափուկ պարագաներու մէջ է որ կը ստանձնէ հայրապետական՝ այլևս հանգիստ և մեծափառ աթոռը ըլլալ հեռու՝ գահը, լի այնքան փուշերով, տատասկներով և... մանաւանդ դառնագին յուսախաբութիւններով։

Ժամանակաւ մեր հանրային երախտագիտութեան արժանի անձնաւորութիւններն էին որ Արարատեան Մայր Աթոռը կը զրկէինք, հոն, թէ աւելի լաւ իմն օգտեցնելու իրենց կարողութիւնները և թէ ատոր հետ՝ իբր պսակ անոնց բոլորանուէր կեանքի աքնութեանց՝ գոնէ բաւարար հանգիստ մը վայելելու։

Իսկ այսօր...։ Այսօր ալ հոն կը զրկենք մեր լաւագոյն տիպարները, իրենց կեանքին վերջալոյսը և մինչև մահը, ալ աւելի տառապելու, տքնելու... անիրաւուելու և անպատուելու համար։

Իմ մասին, հաղար անգամ ափսոսած եմ Հայրիկին կաթողիկոսութիւնը, որ իր բեղմնաւոր կեանքին պսակը չեղաւ սակայն, ինչպէս կը փափագէինք տեսնել անշուշտ, և որու պատճառներուն մէջ եթէ Հայրիկին ծերութիւնը և արտաքին անյաղթելի ու աննպաստ հանգամանքներու ազդեցութիւնը կար, կար և մեծ մասամբ ազգին, մասնաւորապէս կովկասեան կղերական և աշխարհական գործօն դասակարգերուն մեղաւոր անտարբերութիւնը և կուսակցականութիւնը։

Մեր կաթողիկոսները քննադատելէ առաջ, այս մասին ևս անաչառ ըլլալը աղէկ է, թէև անոր խոստովանութիւնը հաճելի չըլլայ։

Այո, մեր սրտագին բաղձանքն է, որ Իզմիրլեան Կաթողիկոսը բաղդաւոր դուրս գայ ոչ միայն իր օգտաշատ իշխանավարութեամբը, այլև այդպիսի աշխատութեան հասարակութեանը՝ փութալ ձեռք բերել թէ Գ. Զալխուշեանի «Հացի կոտոր Զէյթունցուն» գիրքը և թէ եապօնական լուսանկարները։

ՀԱՑԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ

Ստացանք Գրիգոր Զալխուշեանի հրատարակած ժողովածուի 1) մի օրինակի գին Կուսարից, Սաթենիկ Կօշմանեանից 5 ր., 2) Թբիլիսում Արշակ Ատոմեանից, դարձեալ մի օրինակի գին, 3 ր.։

Այդ գրքի վաճառումից մինչև օրս խմբագրութիւնն ստացել է 35 ր. 20 կ.։

ԽՕԼԵՐԱ

Պետերբուրգ, 5 օգոստոսի.—Հիւանդացան 29, մեռան 10 հոգի, հիւանդ պառկած են 351 մարդ։

Ադրանդէլսկ.—Հիւանդացան 4, մեռաւ 1։

Ռիգա.—Հիւանդացան 8, մեռան 2։

Պոլտավա.—Գաղեաչի գաւառում հիւանդացան 4, մեռան 2։ Կրեմէնչուգում հիւանդացաւ 1, մեռաւ 1։

Եարօսլաւլ.—Գաւառում և քաղաքում հիւանդացան 6, մեռան 2։ Բիբինկում հիւանդացաւ 1, մեռաւ 1։

Կրոնշտատ.—Օգոստ. 4-ին ոչ ոք չը հիւանդացաւ։ Հիւանդ պառկած են 3 հոգի։

Ստոկհոլմ.—Երևան հանվեց խոլերայի մի դէպք։ Հիւանդը եկել էր Պետերբուրգից։ Նա առանձնացված է և ապաքինվում է։

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Թիֆլիսի, Երևանի և Գանձակի նահանգների լեռնային շրջաններում խոտի բերքը երկարատև երաշտից յետոյ շատ սակաւ է ստացվել։ Նոյն երաշտի պատճառով այդ շրջաններում վնասվել են նաև ժեղուաբոյծները։

✦ Օգոստոսի 5-ին տեղի ունեցաւ քաղաքային վարչութեան տնտեսական մասնաժողովի նիստը հացի և մսի սակագները իջեցնելու խնդրի առիթով։ Մասնաժողովը յենվելով այն հանգամանքի վրա, որ ներկայումս ամենուրեք ալիւրի և տաւարի գները բաւականաչափ պակասել են, սկզբունքով որոշեց հացի բոլոր տեսակի գները իջեցնել էջ կոպէկով, իսկ մսի վերաբերմամբ տաւարի մսի փունտը դարձնել 10 կ., գառան մսի փունտը 12 կ., գոժէշինը թողնել 8 կ.։ Այս նոր սակագները արդէն ներկայացված են նահանգապետին ի հաստատութիւն։

✦ Արքունական երկաթուղիների վրա նոր կանոններ են մտցված բանարկելներին փոխադրելու մասին։ Որպէս յայտնի է, քրէական և քաղաքական յանցաւորներին առաջ փոխադրում էին մի վագոնի մէջ միասին. այժմ, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութեան կարգադրութեան համաձայն, քաղաքական բանտարկեալներին պէտք է փոխադրեն առանձին վագոնով կամ գոնէ մի վագոնով, բայց անջատված քրէական յանցաւորներից առանձին պահապաններով։ Բացի դրանից, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը կարգադրել է, փախուստներից խուսափելու համար, կալանաւորներին տեղափոխել կալանաւորական յատուկ վագոններով։ («Р. В.»)

✦ Ի նկատի ունենալով որ ներկայումս Շվեդիան գրաւում է առանձին ուշադրութիւն, մենք վաղվանից «Մշակի» բանասիրականի բաժնում տպելու ենք մեր աշխատակից Դերձակեանի այդ երկրում կատարած ուղևորութեան նկարագրութիւնը։

✦ Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան հողային սեկցիայի վարչութիւնը նուիրել է «Գիւղատնտես» շաբաթաթերթին, որպէս նպաստ, հարիւր յիսուն ռուբլի, թողնելով գումարի գործադրութիւնը խմբագրութեան հայեցողութեանը։

✦ «Зак.»-ի ասելով, ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը Կիսլովոդսկից կանցնի Անդրկովկաս մինչև Երևան, իսկ այդտեղից Բագուի վրայով ծովով մինչև Կրասնովոդսկ և ապա երկաթուղով մինչև Տաշկենտ, Օրէնբուրգ, որտեղից և կը վերադառնայ Պետերբուրգ։

✦ «Веч. Гол.»ը լրագիրը հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստր Իզվոլսկին սեպտեմբերին թողնում է իր պաշտօնը։ Նա նշանակվելու է Լօնդոնի դեսպան։ Արտաքին գործերի մինիստր է նշանակվելու Սազոնով։

✦ Այսօր ռուսաց լրագիրները լոյս չը տեսան երէկվայ տօնի պատճառով։

✦ Վրաց էկզարխի պաշտօնակատար Գրիգորի եպիսկոպոսը, Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, Պետերբուրգից մեկնել է Եալտա բժշկվելու համար։

✦ Կովկասում հարկային բարենորոգման վերացման նախագիծը, «Т. Л.»-ի ասելով, երկրիս բարձր իշխանութիւնը արդէն մշակել և ներկայացրել է ֆինանսական մինիստրութեան։

✦ Թիֆլիսում բացվելիք Արամեան հիւանդանոցի գլխաւոր վիրաբոյժի պաշտօնի համար խնդիր է ներկայացրել Տօմսկի համալսարանի պրոֆեսոր Բօգովիչը։

✦ Թիֆլիսի նահանգապետի նախագահութեամբ օգոստոսի 4-ին կայացաւ նահանգական յանձնաժողովի նիստը Կովկասում զէմստվո մտցնելու հարցի առիթով։ Նիստին մասնակցում էին այդ հարցի նը. կատմամբ կազմված երեք սեկցիաների նախագահները։ Բիւրօն մտքերի փոխանակութիւնից յետոյ ցանկալի գտաւ հաստատել ժամանակաւոր դիւան առաջիկայ նահանգական զէմստվային խորհրդակցութեան վերաբերութեամբ տեղեկութիւններ և նիւթեր ժողովելու համար։ Ազնւականութեան և քաղաքային հասարակական ինքնավարութեան ներկայացուցիչները պատրաստակամութիւն յայտնեցին այդ մասնաժողովի պահպանման ծախքերին։ Բիւրօն բաւական գտաւ նկատել, որ սեկցիաների նիստերի պաշտօնական արձանագրութիւնները զանազան հարցերի վերաբերութեամբ, որոնք անպայման վերաբերում են զէմստվային խնդրին, տպվեն «Извѣстія Тифлисской Городской Думы» թերթում։ Նահանգական խորհրդակցութիւն գումարելու ժամանակի հարցի նկատմամբ մեծամասնութիւնը այն կարծիքն յայտնեց, թէ ցանկալի է նշանակել հոկտեմբերի առաջին կէսերին։ Բիւրօյի հետևեալ նիստը տեղի կունենայ օգոստոսի 11-ին։

✦ Շաբաթ օրը, երեկոյեան, Զուբայօվեան ժողովրդական տան բեմի վրա Հայ Դրամատիկ Ընկերութեան թատերասէրների խումբը, մասնակցութեամբ տ. Դիլազեանի, կը ներկայացնէ «Հարստութեան զոհ» 3 գործ. դրաման։

✦ Անցեալ օրը Կովկասի Փոխարքայի պաշտօնակատարին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Գօրու գաւառի Ցագվէրի գիւղի հասարակութեան կողմից։ Պատգամաւորութիւնը խնդրեց վերցնել յիշեալ գիւղում նշանակված էկզէկուցիան։

✦ Արդէն ձեռնարկված է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան 1910 թ. ծախքերի նախահաշիվ քննութեանը։

✦ Եկատէրինէնֆելդում (Բօրչալուի գաւառ) մի խումբ անձանց ջանքերով կառուցանվում է ուղղափառ եկեղեցի։

✦ Թիֆլիսի վրաց հոգևոր սեմինարիայի նոր շինութեան օծումը տեղի կունենայ սեպտեմբերի 1-ին։

✦ Սեպտեմբերի 1-ին Վագ քաղաքում (Բելգիա) տեղի է ունենալու միջազգային անասնաբուժական կօնգրէս։ Կովկասի կողմից այդ կօնգրէսին ներկայ են լինելու Զուրմաբատի հակաժանտախտային կայարանի կառավարիչ Զունկովսկին և նրա օգնական Լուսը։

✦ Երէկ, օգոստոսի 5-ին, Ա. Քալանթար կարդաց իր առաջին դասախօսութիւնը ուսուցչական մի խմբի համար, որ վերջին շաբաթների ընթացքում լսում էր Թիֆլիսում գիւղատնտեսական դասախօսութիւններ՝ մեղուաբուծութիւն, թռչնաբուծութիւն և այլն։ Երկրորդ-երրորդ դասախօսութիւնները տեղի կունենան երեքշաբթի օր կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում։ Սկիզբն է երեկոյեան 6 ժամին։

✦ Թիֆլիսի գաւառի Իվանովկա գիւղում տեղացել է սագի ձուի մեծութեան կարկուտ, որից բոլորովին փչացել են այդինները, բանջարանոցները, արևածաղիկը և չը հնձված ցորենի մի մասը։ Վնասները պարզելու համար կազմված է մի մասնաժողով։

✦ Երէկ, ամսիս 6-ին, վրաց Քաշվէթի ս. Գէորգ եկեղեցում վրացի յայտնի հասարակական գործիչ Վլադիմիր Լօրդկիպանիձէի մահվան քառասունքի առիթով տեղի ունեցաւ հոգեհանդիստ, որին ներկայ էր մեծ հասարակութիւն զանազան խաւերից։

✦ Ինչպէս լսում ենք, Թիֆլիսում հրատարակվող «Новый Тифлисъ» շաբաթաթերթը օգոստոսի 20-ից լոյս է տեսնելու իբր օրաթերթ։

✦ Վրաց ֆիլարմոնիական ընկերութիւնը մտադիր է իր դպրոցի գործը ընդարձակել այս սեպտեմբեր ամսից և ներկայումս դասանդվող առարկաներից զատ հիմնել սօլո երգեցողութեան և վիօլօնչէլի դասընթացքներ։

✦ Այս ամսի սկիզբներում խորհրդակցութիւն եղաւ Թիֆլիսի մանր առևտրականների և բեստորան-հիւրանոցների տէրերի ներկայացուցիչների միջև։ Խորհրդակցութեանը յայտնի եղաւ այն իրողութիւնը, որ երկու ընկերութիւններն են գտնվում են նիւթական սուղ դրութեան մէջ, որով ցանկալի համարվեց միացնել ի մի երկու ընկերութիւնները։ Այդ առիթով կազմված է յատուկ մասնաժողով մի ընդհանուր նախագիծ մշակելու համար։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԵՐ

—

✦ Օգոստոսի 5-ին ոստիկանական պաշտօնեայի ձեռքով ձերբակալվել է 1909 թ. մարտի 22-ին քաղաքապահ ոստիկան Սավվա Պասէնկոյին սպանող Գեօրգի Էնուլիձէն։ Նրա մօտ գտնվել են փամփուշտներ։

✦ Օգոստոսի 5-ին Սուդերնայա փողոցում, № 44 տանը, Դիմիտրի Պետկովի բնակարանից գողացել են 240 ռուբլի, երբ նա տանը չէ եղել։ Կասկածը ընկնում է նոյն բակում ապրող Նինա Տօվանէի և Վասիլի Գօցանէի վրա։

✦ Օգոստոսի 5-ին 8-րդ քաղաքամասի ոստիկանական պաշտօնեաները զինուորապահակների հետ միասին շուրջկալ կատարեցին և ձերբակալեցին 43 անանցագրուղթ և պարապ մարդկանց։

✦ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է պրիստաւներին ստորագրութիւն առնել պրօժեկտօրների տէրերից, որ երեկոյեան ժամը 9-ից յետոյ նրանք իրաւունք չունեն զինուորներին թոյլ տալ ներկայ լինել սինեմատօգրաֆներում։

✦ Ոստիկանապետի կարգադրութեամբ որոնվում են Թիֆլիսում անյայտացած Միխայիլ էֆ. Իմինը և 13-ամեայ միջնահասակ Գեօրգի Իոսիֆ. Իվանիձէն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Այս ձմեռ Թիֆլիսում թատրօնական սեզօնը խոստանում է հետաքրքրական լինել։

Օպերայի համար Արքունական թատրօնը կապալով վերցրել է անցեալ տարի լաւ տպաւորութիւն թողած Էյլիէնվալտի խումբը, որ այս տարի հարստանալու է նոր յայտնի երգիչ-երգչուհիներով։ Սեզօնը հաւանօրէն կը բացվի սեպտեմբերի կէսերից։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Պատկերներ արցունքի հովիտէն». Թիւրքահայոց կեանքէն. գրեց Հ. Տ. Ս. Տէվկանց։ Թիֆլիս, 1909, գինն է 20 կոպ.—2 և կէս ղրուշ։ Ի նպաստ Մ. Աւետիսեան ձրի գրադարանի։

Վերոյիշեալ գրքոյկի 48 էջերի վրա զետեղված երեք տատնեակ ոտանաւորները հեղինակը ընորոշում է իր «Երկու խօսք» առաջաբանում այսպէս. «Երգերս տանջվող ոսկրացած ժողովրդի հառաչանաց, բողբոջող կոչերու և ոգորումի արձագանք և արտօսրի դառն կաթիլներ են, արեան և «արցունքի հովիտին» ամենակալանդունդը գլորվող...»։ Եւ իսկապէս գրեթէ բոլոր ոտանաւորների մէջ արտայայտված զգացմունքները և մտքերը ներշնչված են ամենախոր թախիծով ու վշտով՝ հետանք հայրենիքի՝ հայի արիւնով ներկված «արցունքի հովիտի» և հայ ժողովրդի կենցաղի սոսկալի պայմանների և յուսահատական դրութեան... Հեղինակը զուրկ չէ բանաստեղծական ձիրքից, մանաւանդ երբ երգում է ընութիւնը, գեղեցկութիւնը, սէրը, իբրև արգասիք թախիծից ու վշտից ժորմոքված հոգու։ Օրինակ.—Իմ հրացան, Առ թռչնակ, Մարօ, Գիշեր, Կուսին աղօթք, Աշնան հովիկ և այլն։ Վերոյիշեալ ոտանաւորները ամենաաջողվածներն են, իսկ թախիծն ու վիշտը, որոնք անբաժան են բանաստեղծից, առանձնապէս Ադանան և Կիլիկիոյ չքնաղ երկիրը ջարդ ու փշուր եղան՝ համիդեան ըէժիմի մը վայել ոյժգնութեամբ և վայրագութեամբ։ Տեղւոյն խեղճ ու կրակ հայերն են նոյնպէս, որ այնքանէն վերջ և անկէ ի վեր, տարօրինակ արգարադատութեամբ մը, նորանոր զոհերով կը տուժեն... իբր այդ ջարդերուն պատճառ։ Ադանայի հանրածանօթ առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսն անգամ մահուան դատապարտուեցաւ, ապշեցուցիչ լպիրշութեամբ մը, որ անոր դատավարները կը յատկանշէ։

Թիւրքական տրամաբանութեամբ, ասոնցմէ աւելի պարզ և օրինաւոր բան չկայ։ Բայց ինչպէս որակել այդ դժբաղդ գործին մէջ մեր կեդրոնական վարչութեան դանդաղութիւնը, թուլութիւնը և կայութեանը ծանրութեան ըմբռնումի անկարողութիւնը։

Եթէ մեր տեղը յոյները ըլլային...։ Թող անոնց նային գոնէ։

Այսպէս ալ գաւառներու անապահով վիճակին ձգձգումը։

Ուրիշ ատեն մը, ասոնց բոլորին մեղքը առանց խղճահարութեան՝ ոսէ Օրմանեանի մը վզին փաթթած, խիղճերնիս մաքուր և հանգիստ պիտի կրնայինք ազգին միամիտներուն առաջ, մեր պարտքը լիովին կատարած ըլլալու գիտակցութեամբը, պարծենալ։ Իսկ այժմ։

Քրիստոնեաներու և պատրիարքարանաց առանձնաշնորհմանց, և մայրենի կրթութեան նման կարևոր և էական խնդիր մը կայ օսմանեան անհամբեր և ելեքտրավաղ խորհրդարանին կարմրած սեղանին վրայ, ինչպէս և քրիստոնէից զինուորագրութեան խնդիրը, որ, առանց կարգ մը պայմաններ ճշդելու, անխորհուրդօրէն մէջտեղ նետեցինք։ Ասոնք ամենքն ալ հրատապ և այժմէական։

Ի՞նչպէս պիտի ելլենք ասոնց տակէն, չգիտեմ։ Բարեբաղդաբար յոյները ունինք հոն, մեզ համերկրացի, և Ֆէնէրի կարուկ պատրիարքարանը գործին գլուխ, որ գոնէ անոնց համար միակ օրինաւոր և գործօն իշխանութիւնն է, ու մեզ նման այնքան սիրտացաւ անդրիշխանեան գերիշխանութիւններովը և հայ-բաբելոնականութեամբը ջլատուած չէ՝ և որ պիտի կրնայ ազգու ձայնով մը, հատու շեշտով մը և զօրաւոր ձեռներով պաշտպանել իրենց ազգ.-եկեղ.-դպրոցական իրաւունքները և առանձնաշնորհումները, որոնց մենք հայերս ալ՝ գէթ լոկ հետևորդները պիտի կրնանք ըլլալ։ Եթէ այդքանն իսկ ուզենք և կրնանք ըլլալ։

Պիտի ըսէք ուրեմն, այնքան լրագիր, բեմբասայ, ճառ, միթինգ, դասախօսութիւն, ժողով, վէճ, որոշում հայն հայն, ինչ են ասոնք։—Խօսք, պարապ խօսք և ոչինչ։ Ու մանաւանդ յաճախ ինքասարեր խօսք...։

Մեզ համար, նոյնպէս, մաղթենք, որ Դուրեան սրբազանի պատրիարքութիւնը յաջող ըլլայ։ Այսինքն զօրաւոր, կտրուկ և գործունեայ։ Բայց պատրիարք մը ինչ ընէ, երբ ազգային մեքենան զարմանահրաշ տարակաղմութեամբ մը և հակադրութիւններով քալելու և գործելու վիճակի մէջ չէ։ Եւ երբ մանաւանդ ազգը իր այս անբնական, անկանոն և անհաներաշխութեամբ ինկած վիճակը տեսնելու ու դարմանելու ի վիճակի չէ...։

Ժողովուրդ մըն ենք, որ արժանի է աղատ քաղաքացիական, մարդավայել կենցաղի, բայց, գոնէ տհաս և նորսկսնակ, անկարող կը գտնուինք ինքզինքնիս կառավարելու։ Աղատութիւնը, այն սխալ ձևովը՝ ինչպէս կը բռնենք, մեզ իսկ փճացնող զէնքը պիտի դառնայ, մինչև որ մեր հասարակական գիտակցութիւնը հասնի այն աստիճանին, որ կարողանայ կառավարել մեր բանականութիւնը, երբ մեզ վարող ոյժն ու զգացմունքը սիրտէն աւելի և անոր հետ՝ միտքէն և ողջմիտ տրամաբանութիւնէն բղխին։

Միք. Նաթանեան

Կահիրէ, 24 յուլիս (ն. տ.)

ձին հրապոյր են տալիս նրա քնարին, որը գրաւում է ընթերցողին իր անկեղծ պարզութեամբ ու զգացմունքների անարատութեամբ։ Ահա օրինակ «Աշնան հովիկ» գեղեցիկ ոտանաւորից.

Ինչո՞ւ տրտում փչես, հովիկ,
Փնտռես, արդեօք, դուն գեղեցիկ
Գարնան ծաղկունք թէ սոխակներ,
Կանաչ դաշտեր, ազատ լեռներ։
Աւաղ նոքա անցան գացին,
Դեղնած տերևք միայն թողին...
և այլն։

Բանաստեղծը իր սիրած գեղեցկուհի Մարոյին ընութեան մէջ ամենից բարձր է դասում (Մարո).

Պարտիզին մէջ անուշաբոյր
Շուշան մը տեսի քնքուշ հեզիկ,
—Զէ՞, ասացի, հեզահամբոյր
Մարոխս պէս չես գեղեցիկ։
Մի փայլիլիր, ծաղերդ ծողեր,
Ո՛վ դու աստղիկ բոց պսպղուն,
Զէ՞ Մարոխս զոյգ վառ աչեր
Քեզնից աւել են շողշողուն։

Սակայն աստղից սոխակին, լուսնին, «սառնորակ առուակին» անցնելուց յետոյ, վերջ ի վերջոյ՝

Երբ կը տեսնեմ կամարն երկնի,
Պայծառ մաքուր, անբիծ յստակ,
Հա, ասում եմ, դա Մարոի
Սրտէն բերէ իսկ օրինակ։

Այս կտորից ինչպէս ընթերցողը նկատում է՝ մինչ սրտի կամ սիրոյ մէջ բանաստեղծը ամենից բարձր դասում է երկնային, մաքուրը, անբիծը. իսկ իր սիրող հոգու պատկերն է՝

Կապոյտ ովկիանն մինչ կատաղի,
Կոհակներով լեռնանման
Գոչէ ահեղ և փրփրի,
Դա իմ հոգւոյն է կերպարան։

Բերենք նաև մի կտոր «Գուսին աղօթք» սիրուն ոտանաւորից, ուր նկարագրված է ընութիւնը գիշեր ժամանակ.

Կէս գիշեր էր ջինջ կապուտակ,
Երկինք բացած էր իր կամար.
Գոհար աստղերն յակինթ սուտակ
Փայլփլէին հոն վառ ի վառ։
Լիալուսին արծաթաշող
Խորհրդաւոր սրտին իր դող,
Մեղմիւ լողայր կապոյտ ծովուն
Ալեաց մէջը անծայր անհուն։
Լուռ էր ընութիւն, միայն վտակ
Սև գարդերուն իր ողբերգու՝
Հառաչելով փախչէր հեռու
Երթալ մեռնել նոճերու տակ։
Լերանց կատաղք խորհրդաւոր՝
Լուռ վկաներն այն գարաւոր,
Բնութեան փառքը դիտէին յար,
Թռչնոց երգեր, զեփիւռին պար։
Լուռ կը խոկար, խաղաղ լճակ
Իր ջինջ յատակն խորհրդաւոր՝
Իջած աստղերն այն բիւրաւոր,
Լող կը տային։ Մինչ լուսնեակ
Ոսկեղէն սիւնն վրան պարզած
Դիտէր դէմքն իր մելանոյշ,
Եւ շողերովն իր զովացած
Մանր ալեաց հետ խաղաք քնքոյշ։

Որչափ աջողված են վերոյիշեալ ոտանաւորները, նոյնչափ անաջող, արհեստական և պաֆոսային են այն ոտանաւորները, որոնք գրված են ու նուիրված հայ հերոսների յիշատակին։ Աւետիսեանի, Պեսոյի և Մարտիկի, Հայ ֆէտային, Անմահ Սեպուհի յիշատակին նուիրված ոտանաւորներից բուրում է ժիժիայն շինծուութեան և կոպիտ աշուղականութեան ոգի։ Օրինակ՝

Սև գոյժ ցնցեց բոլոր հայերն անխտիր,
Սուգը պատեց արիւնաներկ մեր երկիր,
Հերոսական մահով կիյնար անկենդան
Հայ պաշտելի գործիչ Սեպուհն աննման...
և այլն։

Նաև անաջող են այն ոտանաւորները, որոնց մոտիվները, թէման վերացական խնդիրներ են. օրինակ՝ Իմ նպատակն է ուսանել, Սահմանադրութիւն, Տաճկահային ջարդը և այլն։

Վատ չեն Վասպուրականի բարբառով գրված մի քանի ոտանաւորները։

Խորհուրդ ենք տալիս հեղինակին թողնել ազգասիրական կամ խրատական մոտիվները, թէմաները և հնչեցնել քնարը երգելու հայրենի ընութեան հրաշալիքները և դրանց մէջ նահատակված և այժմս էլ տառապող հայ ժողովրդի ցաւերը, որ, ինչպէս երևում է այստեղ մէջ բերված օրինակներից, այնպէս աջողվում է նրան։ Կալիաս

ՄԱՄՈՒԼ

Վերջերս հայ ուսանողութեան շրջանները կոչէր տպեցին, ուղղված իրանց նախկին ընկեր-ուսանողներին, որոնցով յորդորում և աղաչում էին վերադարձնել ուսանողական կասսաներից փոխ վերցված նպաստները, որպէսզի չքաւոր ուսանողները հնարաւորութիւն ունենան նոյնպէս նպաստ ստանալու և աւարտելու իրանց ուսումը։ Տեսնելով որ այդ յորդորը շատ էլ չէ ազդում, ուսանողները սպառնացին լրագրութեան միջոցով մերկացնել այդ անպարտաճանաչ պարտականների անունները կամ դատարանի միջոցով պահանջել պարտք դուժարները։ Այդ նամակը տպված էր և «Մշակի» մէջ, ուր ակնարկված էր, թէ անպարտաճանաչ պարտականների շարքում կան շատ յայտնի և հարուստ բժիշկներ, իրաւագէտներ, ինժեներներ և նոյնիսկ Պետական Դուժայի մի անդամ։

Այդ «նոյնիսկ» խօսքը առանձին նշանակութիւն ունէր, որովհետև ով ով, բայց, յամենայն դէպս, մի անձն, որ իրան անուանում է ամբողջ մի ժողովրդի ներկայացուցիչ, որ յատկութիւն ունի պետական ամբիօնից ուրիշներին քարոզներ տալ, կարծիքներ յայտնել, օրէնսդիր լինել այդպիսի անձի համար, որպիսին է Պետական Դուժայի անդամը, պարտաւորիչ պէտք է լինի բարոյականութեան տարրական պահանջը՝ պարտաճանաչութիւնը, ստացած նպաստի վերադարձնելը, մի խօսքով չքաւորների բերանից հաց չը խլելը։

Ահա այդ հարցի առիթով Մոսկվայի «Гол. Моск.» թերթը հետևեալ յօդուածն է տպել «Ի՞նչ տեսակ անձինք են լինում աշխատաւորները» վերնագրով (Какія лица бываютъ трудовиками)։

«Г. Моск.»-ի մէջ հաղորդեցինք, որ դատարանը վճռել է պահանջել ինժեներ Պատկանեանից, որ ստանում է տարեկան մի քանի հազար ռուբլի ռոճիկ, յօգուտ Մոսկվայի տեխնիկական դպրոցին կից ուսանողական երկրացիութեան 35 ռ., որ Պատկանեանը վերցրել էր իբրև նպաստ ուսանող եղած ժամանակ։ Այդպիսի գործեր յաճախ քննվում են վերջերս մեր դատարաններում և նրանց որոշումները գրեթէ միշտ լինում են յօգուտ ուսանողական վատ կասսաների։ Այժմ Մոսկվայի հայ երկրացիութեան վարչութեան անդամներից մինը հաղորդում է «Մշակ» թերթում, թէ շուտով լրագիրներում կը հրատարակվեն ուսանողական կասսայի բոլոր անճիշդ պարտականների անունները, որոնց մէջ քիչ չեն յայտնի և հարուստ բժիշկներ, իրաւաբաններ, ինժեներներ և նոյնիսկ... Պետական Դուժայի մի անդամ։

Մեր կողմից մենք կաւելացնենք, որ Պետական Դուժայի վերոյիշեալ անդամը ոչ այլ ոք է, եթէ ոչ Իվան Եակովլէվիչ Սաղաթելեանը, երդուեալ հաւատարմատար, որ սօլիդ պրակտիկա ունէր Բաքուում և այժմ ստանում է 4200 ռ. պետական ռոճիկ։ Նախկին աղքատ ուսանող Մոսկվայի համալսարանի, պ. Սաղաթելեանը ներկայումս, ինչպէս հաւաստիացնում են, ունի բաւական սօլիդ գրամագլուխ և հաստատվում է հարուստ մարդ։ Նա հաշվում է աշխատաւորների ֆրակցիայում։ Նա ամուրի է։ Ուսանող եղած ժամանակ, նա լայն կերպով օգտվել է ուսանողական կասսայից և աւարտել է համալսարանը միայն շնորհիւ այդ օգնութեան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նիկոլսկ-Ուսուրիյսկի, 13 յուլիսի

Ընդունեցէք հայոնական այս 200 տեսարանները և ձեր ժամ ծանօթների շրջանում ցրեցէք և գոյացած դրամը ուղարկեցէք Աղանայի հայերի օգտին։ Այդ տեսարանները տեղումս ծախվում են հատը 50 կոպէկով, իսկ այդտեղ չը գիտեմ. այդ թողնում եմ ձեր հայեցողութեանը։ Աչքի առաջ ունենալով, որ այդ փողը (գոյացած) պէտք է գնայ բարի նպատակի, լիայոյս եմ, որ ձեր շրջանը ուրախութեամբ ձեռք կը բերէ, եթէ ոչ աւելի, գոնէ այսպեղի գնով։ Այսպէս թէ այնպէս, այդ կախված է գնողների բարոյական և մարդասիրական զգացմունքներից...։

Լուսանկար՝ Սմբատ Բուդաղեան

ՄԵՐ ԱՅԺՄԵԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ

—

Վերջին մեր եկեղ.-ծխական դպրոցների փակումը 10 տարվայ չափ մոռցրեց մեր դպրոցական կեանքը։ Այս շրջանում հայ ուսուցիչներն իրանց ապրուստի համար այլ և այլ ասպարէզներ մտան, այլ և այլ պարապմունքներ գտան։

Ի՞նչ էր մինչև այդ ժամանակի հայ ուսուցչի գիտութիւնը, պատրաստութիւնը, զարգացումը. այդ մի կողմ թողած. մի բան պարզ էր, որ նա սիրում էր դպրոցն իր անձը մոռանալու չափ, որ նա շատ քիչ էր մտածում իր նիւթական վիճակի վրա, որ նա դպրոցի գոյութիւնը պահպանելու մէջ էր գտնում իր բոլորանուէր ճիգերի փորձաքարութիւնը։ Այդ ամենի հետ միասին նա՝ գրեթէ առանց բացառութեան՝ ազգաւէր հայ էր, բարիս մաքուր հասկացողութեամբ։ Եւ ուսուցչի ճիգ ու ջանքը, ձգտումն ու փափագը կայանում էր նրանում, որ գրագիտութեան, ուսման հետ անբաժան՝ իր այդ զգացումներն իր սանների սրտի, մտքի ու հոգու մէջ տար արմատացնել-հաստատել։

Հայ ուսուցչութեան, հայ դպրոցի այդ խնկելի ու գնահատելի ծառայութեան արդիւնքն էր կովկասահայի այն միահամուռ դիմադրութիւնը, որ հրապարակ ելաւ գոլիցինեան բռնութիւնների ժամանակ հայ եկեղեցու իրաւունքների պաշտպանութեան խնդրում։

Հայ ուսուցչութիւնը կանգնած էր հայ եկեղեցական-ազգային պատժական հողի վրա, զինված էր այս հողի գոյութեանը սպառնացող վտանգների դէմ օրհնասական պատերազմ տալու վճռականութեամբ։ Նա հպարտ էր, որ կազմում էր «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»-կանց շարքերը։ Այո, նա գրեթէ սնդվում էր մանանայով ու նեկտարով։

1905 թ.-ին հայ ուսուցչի, հայ դպրոցի մաքառումները պակվեցին փառաւոր յաղթանակով։ Կառավարութիւնը ճանաչեց հայ եկեղեցու դարաւոր իրաւունքները և վերադարձրեց կալուածները ու վերացրեց դպրոցների վրա դրած փականքները։

Այո, 1905 թ. բացվեցին մեր եկեղ.-ծխ. նախկին դպրոցները, բայց առանց նախկին ուսուցիչների։ Սրանք այլևս չը կային։

Դասակարգային կռիւները անարգութեան սիւնին էին դամել ընդհանուր ժողովրդասիրութիւնը, ազգասիրութիւնը. նիւթապաշտական բէս վարդապետութիւնը ցնորք ու առասպել էր քարոզել ժամանան ու նեկտարը։ Նորաբողջ կուսակցութիւնները իրանց վերը յիշած նշանաբաններով ու դրօշակներով ամենուրեք բռնել էին հրամանատարական կէտերը և ասպարէզից վանել-վռնտել էին նախկին իշխանաւորներին, նախկին վարիչներին, նախկին գործիչներին։

Եւ այդ նոր պայմանների տուրք էին մեր վերաբացվող դպրոցների նոր ուսուցիչները, Այո, սրանք նոր էին իրանց աշխարհնայեցողութեամբ, իրանց պահանջներով, իրանց ձգտումներով։ Սրանք չէին և չեն կամենում ճանաչել եկեղեցական-ժողովրդական դպրոց, այլ «ազատ» դպրոց։ Սրանք չեն կամենում հնազանդվել ժողովրդից ընտրված ազա հոգաբարձուների, այլ որքան հնար է, իրանց՝ դիցուք «ուսուցչական միութեանը»։

Դասակարգային կեանք, դասակարգային կազմակերպութիւն, դասակարգային շահ ու ձգտում...

Ինչո՞ւ արհեստաւորը կունենայ արհեստանոցը իր շահագործութեան համար, բանւորը կունենայ գործարանը իր շահագործութեան համար, հոգևորականը կունենայ եկեղեցին իր շահագործութեան համար, խանութպանն իր խանութը, թաֆիյականն՝ իր թաֆիան, կուսակցականն իր կուսակցութիւնը, իսկ ուսուցիչը չը պիտի ունենայ դպրոցն իր շահագործութեան համար։

Բայց վրա հասան ձախորդ օրերը, նոր դրօշակիրները ստիպվեցին ծալել-ծածկել իրանց դրօշակները, տեղի տալ նախկին իշխանաւորներին և յարմարվել կեանքի պահանջների հետ որքան հնար է։

Եւ այսօր մեր ուսուցչութիւնը, ընդհանուր առմամբ, իսկապէս անգոյն է, անուղղութիւն, ներվի ասել, անազգ, անկրօն։ Նրա համար ինչպէս մուրն է ու շաանդաղ իր ներքին աշխարհը, այնպէս և մուրն է «ազատ դպրոցի», «ազատ մարդու» գաղափարը, պատկերը, ըմբռնումը։ Նա չը գիտէ մինչև անգամ ինչ և ո՞վ է ինքը։ Պարծենում է, որ սօցիալիստ է, բայց իր ճառերով ոչ թէ իսկական, այլ թթու հայ է հանդիսանում. գուրս է ձգում ներքնական երևոյթները կրօնի գասերից իբրև յիմարութիւններ, բայց ոչ միայն չարաչար զայրանում է, երբ իր մասին տարածում են, թէ «անաստուած է», այլ և ամեն կերպ աշխատում է ցրել այդպիսի սխալ կարծիքը։

Հին ուսուցիչը խտացնում էր իր մէջ սահակ-մեսրոպեան հոգին, շունչը, ուղղութիւնը. նոյնը իր ամբողջ էութեամբ ձգտում էր արմատացնել իր սանի մէջ, նոյնը պարծանքով, հրապարակով ու ոգևորութեամբ քարոզում էր ժողովրդին։ Նոր ուսուցիչը, մեր օրերում, սահակ-մեսրոպեան հոգին, ուղղութիւնը «իսկական հայի» հոգի և ուղղութիւն համարելով՝ խորշում է նրանից, իսկ ինչպիսի մարդ, ինչպիսի հայ է ուզում պատրաստել տալ հայ ժողովրդին հայ եկեղեցական դպրոցից՝ այժմեան մեր հայ ուսուցչի համար մութն է և անորոշ։ Բայց որ նոր ուսուցչի համար իր շահի պաշտպանութիւնը առաջին տեղն է բռնում, այդ կասկածից դուրս է, թէև այդ իր իրաւունքն է։

Արդ՝ երբ այսօրվայ մեր նոր ուսուցչութիւնը ընդհանուր կերպով, այս է ներկայացնում, մեզ համար մի շատ էական կենսական խնդիր է առաջանում թէ ո՞ւր է առաջնորդում մեր մատաղահասակ զաւակներին մեր ուսուցչութիւնը, ինչպիսի՞ ապագայ ժողովուրդ է պատրաստում հայ ազգի ու եկեղեցու համար, ի՞նչ համազգային գաղափարներով նոր սերունդը անքակտելի օղակված է իր անցեալի պատմութեան հետ։

Հայ դպրոց ունենալուց աւելի այսօր մեզ համար կարևոր է հայ ուսուցիչ ունենալ։ Որպէսզի դպրոցը լինի ազգային, պէտք է ազգային հոգով տոգորված լինեն իրանք ուսուցիչները։

Ուսկի՞ց առնել այդպիսիներին։

Թերուսութիւնը մեր տունը քանդեց և շարունակ քանդում է։ Եւ այսօր մենք ամբողջովին այդ թերուսների ձեռքին ենք։ Աստուած, կրօն, եկեղեցի, ազգ, լեզու, ընտանիք, ընակավայր, միջավայր, սովորութիւն—սրանք այն գաղափարներն են, այդ գործօններն են, այն հաստատութիւններն են, որոնց էութիւնը, կարևորութիւնը, ազդեցութիւնը, նշանակութիւնը դարերի ընթացքում յայտնվել են, ներգործել են մարդկային ցեղի լինելու չը լինելու, ազգերի ծնվելու, աճելու, անհետանալու, կենսունակութիւնը պահելու կամ կորցնելու վերաբերմամբ։ Դրանց մասին հսկայ հանճարներ են խոկացել, մտածել, գրել, ուսումնասիրել. դրանց գոյութիւնը ճանաչել է ամբողջ աշխարհը, մարդկութիւնը։ Եթէ երբեմն-երբեմն վիթխարի հատ-հատ մտածողներ յայտնել են դրանց էութիւնը մոտեցուցիչ կասկածներն, յայտնել, արել են այդ իրանց ձեռք առած խնդրի մեծութիւնը վայել զգուշութեամբ, բայց գրական վճիռը տակաւին չէ արձակված։ Կեանքը շատ նոր յայտնութիւններ ընդունել ու կատարել է, բայց Աստուծոյ, կրօնի, եկեղեցու, ազգի, լեզուի մասին դեռ մարդկութիւնը գնում է անշեղ։

Հէնց այն պարագան, որ այսօրվայ ուսուցիչները այնքան հեղինակօրէն ժխտում են, այնքան թեթևօրէն բացատում են վերոգրեալների կարևորութիւնը, գոյութիւնը, նշանակութիւնը, ամենապերճախօս ապացոյցն է նրանց Թերուսութեան, նրանց տգիտութեան։

Պէտք է ամենից առաջ հոգալ ու մտածել լուրջ, գիտուն, պատրաստված հայ ուսուցիչներ հասցնել մեր եկեղեցական-ազգային դպրոցների համար։

Որքան մի ժամանակ կայր հալածանքը, կոպիտ բռնապետութիւնն էր վտանգ սպառնում մեր ազգային առաջադիմութեանը, ազգային գոյութեանը, տասնապատիկ աւելի ազատ մրցութիւնն է այժմ սպառնում մեր ազգային գոյութեանը։ Պիտի լարենք մեր ոյժերը այս փոքրագոր ազատ մրցութեան մէջ մեր ազգային կեանքը գտնելու, քաջաքակրթելու, ամրացնելու և, որքան հնարաւոր է, գոյութեան կռիւ մէջ մեր ազգի գոյութիւնը անվտանգուց պահպանելու։

Կեանքը՝ գիտակցական, ազնիւ, առաջադիմական կեանքը, հէնց այդպիսի սքանչելի մրցութեան մէջ է որ ստանում է խորհրդաւորութիւն, որ բարձրացնում է ցեղի, ազգի վարկը, որ լծում է ազգի, ցեղի բոլոր անդամներին ինքնաձանձնչօրէն և ինքնազոհօրէն ուղիներ ճեղելու, բռնելու, հարթելու և այդ ուղիներով առաջ վարելու ազգային քաղաքակրթութիւնը, ազգային կուլտուրան։

Այս շաւղով ընթանալու համար օր առաջ պէտք է միջոցներ ձեռք առնել ազատելու մեր կրթական գործը թերուսների ձեռքից և տալու լուրջ, գիտուն, ազնիւ ուսուցիչներ, դաստիարակներ։ Մէտ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

5 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պատերազմական դրութիւնը վերացվում է Տուրուխանի շրջանում։ Ուժեղացված դրութիւնը դադարում է Կովվէնի նահանգում։ Մի տարով երկարում է ուժեղացված պահնորդութեան դրութիւնը Սաւրօպոլ քաղաքում և Տօբոլի նահանգում։

ՊԷՆԶԱ։ Առաւօտեան ժամը 8-ից Պենզայի արքունական գինու պահեստում հրդեհ ծագեց։ Կրակը ոչնչացրեց 50000 գոյլ սպիրտ և 4500 գոյլ օղի, ջուտները հասնում են 600,000 ռուբլու։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ. Հանդիսաւորութեամբ բացվեց սեվաստօպօլեան պաշտպանութեան մասնակցող զինեալ-ադիւտանտ Տօտլեբէնի արձանը։

ՊՕԼՏԱՎԱ։ Բօբրիկ գիւղում հրդեհը ոչնչացրեց 35 գիւղական խրճիթներ. Ջուտները հասնում են 40,000 ռուբլու։

ՆՈՎՈՉԵՐԿԱՍԿ։ Բաղդօրի ստանիցայում կազմվեց կազակների առաջին արտելը անագարա գինի պատրաստելու և վաճառելու համար։

ՎԻԵՆՆԱ։ Արտաքին գործերի մինիստր բարոն Էրլենթալին շնորհվեց կոմսութիւն։

ԼՈՆԴՈՆ։ Բէյտէրի գործակալութեանը հեռագրում են Պեկինից, որ Խանկու Սչուանի երկաթուղու համար փոխառութեան հարցը լուծել են ամերիկական հաւատարմատարը և չինական արտաքին գործերի մինիստրութիւնը։ Փոխառութեան գումարը հասցված է մօտ 30 միլիոն դոլլարի։ Անգլօ-ֆրանկօ-գերմանական դրամատէրերը վերցնում են 3/4 մասը, ամերիկացիները՝ փոխառութեան չորրորդ մասը։

ԻՇԼ։ Անգլիական թագաւորի արարողապետը Ֆրանց-Յովսէփ կայսրին յանձնեց թագաւորի նամակը և ընծաներ կայսրի ծնունդեան օրվայ առիթով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՐԿԱՒՈՐԵՆ
ՂԱԶԱՐԻԵ ս. Վարդանանց երկդասեան դպրոցի համար
Մի ուսուցիչ
ԵՒ
Մի ուսուցչուհի
Առաւելութիւն տրվում է ամուսիններին։ Ռոճիկը ուսուցչին 500 ռ., ուսուցչուհուն՝ 350 ռ.։ Ճանապարհածախք իւրաքանչիւրին 30 ռ.։ Դասերի թիւն է 24/28 ժամ։ Դիմել՝ Ղազվին, հոգաբարձու Յակոբ Կարապետեանցին։
(Կ. Հ. ու.) 728. 4—3

Օպալայի գործարանը
Ի. Գ. ԿԱԼԻՏԱԵՎԻ, Բօգոդուխովում, Խարկովի նահանգ, առաջարկում է կարտոֆէլի ալիւր։ Նմուշները և վաճառքի պայմաններն ուղարկվում են ըստ պահանջման։
(ու.) (М. 240089) 719. 8—2

Ուշադրութիւն դարձրէք!
Տղամարդկանց հագուստի համար կտրուածքների շրջանում եղած նորութիւնը «Շէվիոտ Կոլումբ» կտորն է։ Այնպիսի մի էժան գնով՝ այն է 5 ռ. 25 կ., լաւ տեսակինը 6 ռ. 25 կ., տղամարդկանց ամբողջ կոստիւմի համար, 4 1/4 արշին, կտորը ոչնչով չէ պակասում արշինը 5—6 ռ. արժեցող նոյնատեսակ կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է՝ գեղազանգամութիւն, գործնականութիւն և դիմացկութիւն։ Գործերը՝ ոն, մուգ կապույտ, շագանակագոյն, ողորկ ձիթագոյն կամ թէ նոյն գոյները՝ բծերով։ Ուղարկվում է պօստով, վերադիր վճարով և առանց կանխավճարի։ Երեք կամ աւելի կտոր պատուիրելուց՝ իւրաքանչիւր կտորին ձրիաբար կցվում է հարկաւոր քանակութեան աստառացու։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւորութիւն, եթէ կտորը չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Պահանջները խնդրում եմ հասցէագրել՝
Въ фабрику шерстяныхъ издѣлій
Зигмунта Розенталя г. Лодзь № 15. Е.
(В.29638) 384. 1—1

Տպագրվում է
և պատրաստ կը լինի մինչև օգոստոսի 15-ը
Իրաւաբանական դասերը
Դադարեցնում եմ բաժանորդագրութիւնը։
Գրքի գինը 1 ռուբլի. հատով պատուիրողը ճանապարհածախք չէ վճարում։
Գումարով գնողն իր ճանապարհածախքով ստանում է զիջումով։
10 օրինակի համար 20%
20 » » 25 »
30 » » 30 »
Առանց կանխավճարի պատուէրներ կարող են տալ միայն իմ նախկին աշակերտները։
Սեդրակ Մանգինեան
Тифлисъ, Могнинская, 4.
(օ. մ.) 746. 4—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Զհանեանցի
Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։
(օ. մ.) 604. 20—14

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ
„Հայ հեղինակներ“
գիրքը, հեղինակի ձեռքով բարեփոխված և հարստացված (384 էջ)։
Գինն է 1 ռուբլի
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
Մամուլի տակ է «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ», պատկերազարդ, բարեփոխված, Գ. տպագրութեամբ։ (հ. կ.) 734. 10—2

Լոյս տեսաւ և վաճառվում է
ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆԻ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Երրորդ լիակատար տպագրութիւն
Հայոց ծխական դպրոցների Գ., Դ. և Ե. տարիներ միասին։
Գինն է 50 կոպէկ։
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, մինչև 1909 թ. օգոստոսը։
Բովանդակութիւն.—Նախապատմական ժարդը, նախնի Հայաստան, Ուրարտու, հայերի ծագումը, կուլտուրան, կրօնը։ Հայոց պատմութիւն ըստ հայ և օտար պատմիչների, աւանդութիւններ և իրական պատմութիւն։ Թւականները ստուգված։ Ուրարտուի քարտէզ։
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». (օ.մ.) 749. 3—2

ՀԱՅԱՊԱՀԱՍԿԱՆ ԴԱՄԱՐԱՆՆԵՐ
Ի. ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ
Հիմնված 1890 թ. Թիֆլիսում
Նարէրեմենյա փող., Վերայի կամուրջի մօտ.
Յատուկ առևտրական ուսումնարան երկու սեռի անձանց համար, 15 տարեկանից ոչ պակաս։ Դասարանները պատրաստում են հաշուապահի, թղթակցի, գործակալի և այլն պաշտօններ վարելու կառավարչական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական հիմնարկութիւններում։ ՕՐԻՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ։ ԴԱՍԱՒԱՆԴՈՂՆԵՐԻ ԼԱՒ ԿԱԶՄ։ 19 տարվայ ընթացքում աւարտել են հազարաւոր երիտասարդներ, որոնք այժմ վարում են պատասխանատու պաշտօններ։ Մանրամասնութիւնները ձրիաբար արվող ծրագիրներում։ Խնդիրների ընդունելութիւնը սկսված է։ Պարապմունքները սեպտեմբերի 15-ից։ Դրասենեակը բաց է ամեն օր։ (օ. մ.) 667. 13—9

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская 7.